



ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Սպասելով Նոր Չարագուճներու

Երրորդ շաբաթն ըլլալով Արցախը Հայաստանին կապող կեանքի ճանապարհը՝ Լաչինի միջանցքը կը մնայ փակ: Սնունդի պաշարները սկսած են սպառիլ, իսկ Ռուս խաղաղապահները վճռակամութիւն չեն ցուցաբերել հեռացնելու համար «բնապահպանութեան» անուան տակ ճանապարհը փակած ատրպէյճանցիները: Հակառակ տիրող իրավիճակին Արցախի ժողովուրդը կը մնայ վճռական ու կը ցուցաբերէ անկոտորում կամք՝ կառչած մնալու իր հողին, հայրենիքին ու անկախութեան: Տասնեակ հազարաւոր հայորդիներ համախմբուելով Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակին վրայ շատ յստակ պատգամ յղեցին ոչ միայն միջազգային հանրութեան, այլև Պաքուին, հասկցնելով թէ, ոչ մէկ զիջում չսպասեն Արցախահայութենէն:

Միւս կողմէ, Երեւան իր հաստատած արտաքին դիւանագիտական կապերով կը փորձէ Լեռնային Ղարաբաղի հարցը միջազգայնացնել եւ Արցախի իշխանութիւնները դարձնել բանակցային կողմ: Այս ուղղութեամբ արդէն իսկ նկատելի է որոշ յառաջնադարձում: ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի անցեալ շաբաթ Հայաստանի հրաւերով կայացած նիստը դիւանագիտական մեծ յաջողութիւն էր Հայկական կողմին համար: Ապահովութեան խորհուրդի անդամ պետութիւններու ներկայացուցիչները, հակառակ Ատրպէյճանի ներկայացուցիչի բողոքներուն, օգտագործեցին Լեռնային Ղարաբաղ անուանումը եւ ապա ատրպէյճանական կողմէն պահանջեցին վերականգնելու տեղւոյն բնակչութեան ազատ տեղաշարժի իրաւունքը: Բազմաթիւ երկիրներու եւ միջազգային կազմակերպութիւններու կողմէ կը հնչեն նման կոչեր եւ Ատրպէյճանի հասցէին դատապարտումի խօսքեր:

Պաքուն բնականաբար զայրացած է այս բոլոր զարգացումներէն՝ կողմնակալութեան մէջ ամբաստանելով միջազգային կառոյցները, որոնք Հայաստանի դիրքորոշում կ'արտայայտեն:

Միւս կողմէ Երեւան երկու առիթներով մերժեց մասնակցիլ Ատրպէյճանի հետ հանդիպումներու: Առաջինը, Մոսկուայի մէջ Դեկտեմբեր 23-ին նախատեսուած Հայաստանի, Ռուսիոյ եւ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարներուն հանդիպումն էր, սակայն հայկական կողմը խնդրեց յետաձգել զայն, քանի որ Հայաստանի արտաքին գործոց նախա-


Արցախը Կը Շարունակէ Մնալ Շրջափակման Մէջ «Այժմ Կը Ստացուի, Որ Լաչինի Միջանցքը Զի Գտնուիր Ռուս Խաղաղապահներու Վերահսկողութեան Ներքոյ».

Փաշինեանը՝ Փութինին

Թէեւ Ռուսիոյ նախագահի խօսնակ Տմիթրի Փետրով պաշտօնապէս յայտնած էր, որ Մոսկուայի մէջ եռակողմ հանդիպում նախատեսուած չէ, Դեկտեմբեր 26-ին, ԱՊՀ պետութիւններու ղեկավարներու աշխատանքային ճաշի ընթացքին Փութինը, Փաշինեանն ու Ալիեւը քննարկած են տարածաշրջանին մէջ ստեղծուած իրավիճակը: Այդ մասին յայտնած է Ռուսիոյ նախագահը Հայաստանի վարչապետին հետ հանդիպման ժամանակ:

«Մենք Ձեզի հետ դեռ երէկ սկսած ենք, եւ յաջողեցանք երեքով խօսիլ ի հարկէ, գլխաւոր հարցը Հարաւային Կովկասի մէջ իրավիճակի կարգաւորումն է ընդհանուր առմամբ, հայ-ատրպէյճանական շարքերու թիւնները, ամէնը, ինչ կապուած է Ղարաբաղի հետ: Այնպէս որ, ինչպէս պայմանաւորուած էինք, կը քննարկենք այդ հարցերը մանրամասնօրով», Հայաստանի վարչապետին հետ պաշտօնական հանդիպման ժամանակ ըսած է Փութինը:

Իր պատասխան խօսքին մէջ Հայաստանի վարչապետը ըսած է. «Շնորհակալութիւն վրատի-



Հազարաւոր արցախցիներ Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակին վրայ կը պահանջեն բանալ Լաչինի ճանապարհը

միր վրատիմիրի, առաջին հերթին թող ստուէք շնորհակալութիւն յայտնել հրաւերի եւ ԱՊՀ ոչ-պաշտօնական գագաթաժողովի կազմակերպման համար: Սա արդէն լաւ աւանդույթ է դառնում:

«Ի հարկէ, Դուք ճիշդ էք, տուեալ պահին գլխաւոր հարցը, ամենագործնական հարցն այն ճշմարտան է, որն առկայ է Լաչինի

միջանցքում: Գիտէք, արդէն գրեթէ 20 օր է Լաչինի միջանցքը փակուած է: Դա Լեռնային Ղարաբաղում ռուս խաղաղապահների պատասխանատուութեան գօտին է: Յանկանում եմ յիշեցնել, որ համաձայն ՌԴ նախագահի, Ատրպէյճանի նախագահի եւ Հայաստանի

Ֆրանսացի Քաղաքական Առաջնորդները Մաքրոնին Կոչ Կ'ընեն Երաշխաւորելու Հայերուն Անվտանգութիւնը Արցախի Եւ Հայաստանի Մէջ

«Էմանուէլ Մաքրոնը պէտք է ամէն ինչ ընէ Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի Հանրապետութեան մէջ հայերուն անվտանգութիւնը երաշխաւորելու համար»:

Ֆրանսացի քան մէկ տասնեակ քաղաքական առաջնորդներ՝ ինչպէս ձախակողմեան, այնպէս ալ աջակողմեան ճամբարէն, համատեղ նամակ հրատարակած են «Le Monde» օրաթերթին մէջ՝ նախագահ Մաքրոնին կոչ ընելով անյապաղ միջամտելու Հայաստանի եւ Արցախի շուրջ գործընթացներուն՝ «կանխելու անուղղելի»:

Ֆրանսայի խորհրդարանի երկու պալատներու ներկայացուցիչները համատեղ նամակի մէջ կը նկարագրեն Ատրպէյճանի կողմէ շրջափակման մէջ յայտնուած Արցախի մէջ տիրող իրավիճակը՝ մարդասիրական մեծ աղէտի վտանգ, 120 հազար մարդ, այդ շարքին՝ 30 հազար երեխայ, զրկուած է կենսական պաշարներէն՝ ներառեալ սնունդ եւ բժշկական անհրաժեշտ միջոցներ:

Նամակին հեղինակները կը շեշտեն, որ ստեղծուած իրավիճակը 2020 թուականէն ի վեր հայերու, ընդ որում՝ ինչպէս Արցախի մէջ ապրող, այնպէս ալ Հայաստանի



Ֆրանսային նախագահ Էմանուէլ Մաքրոն

քաղաքացիներու դէմ Ատրպէյճանի յարձակումներու սրման նոր փուլի սկիզբն է, եւ Պաքուի գործողութիւնները իրենց հիմք կու տան ենթադրելու, որ Ատրպէյճանը կանգ պիտի չառնէ, որեւէ առիթ պիտի օգտագործէ՝ հալածելու հայերը ցեղային գտման նպատակով:

Թուարկելով հայերու դէմ Պաքուի գործողութիւնները՝ պատերազմական շանցադրութիւնները, Հայաստանի ինքն-

Ռուսաստանը Հայաստանին Կը Ստիպէ Միջանցք Տրամադրել Պաքուին, Անդամակցիլ Միութեան Կան Պետութեան. Ախ Քարտուղար



Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան

Իշխանութիւնը առաջին անգամ ամենաբարձր մակարդակով կը յայտարարէ, որ Հայաստանին կը ստիպեն իր ինքնիշխան տարածքով միջանցք տրամադրել Ատրպէյճանին, ինչպէս նաեւ ան-

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

2022 Թ. Անվտանգային Մարտահրավերների Եւ Դրանց Դիմակայման Տարի

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Անցնող տարում ակտիվ դիվանագիտական գործընթացներն ուղղուած էին տարածաշրջանում կայունութեան հաստատմանը:

Հայաստանի եւ Արցախի 2022 թ. քաղաքական, սոցիալ-տնտեսական ոլորտներում հիմնական զարգացումները տեղադրուած էին 2020 թ. 44-օրեայ պատերազմին յաջորդած իրողութիւնների շրջանակներում: Հայ-ատրպէյճանական եւ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման ինտենսիվ գործընթացներում՝ չհրաժարուելով առաւելապաշտական եւ ոչ իրատեսական պահանջներից, պաշտօնական Պաքոն էականօրէն դանդաղեցրեց դրանցում շոշափելի արդիւնքի հասնելու հնարաւորութիւնները, իսկ տարուայ երկրորդ կէսին լայնածաւալ ակրեսիա կազմակերպելով Հայաստանի սահմանի նկատմամբ եւ փակելով Արցախն արտաքին աշխարհին միացնող միակ ճանապարհը, գրոյի հասցրեց տարուայ արդիւնքներով բանակցային գործընթացում որեւէ արդիւնք ապահովելու հնարաւորութիւնը:

Անցնող տարուայ մեկնարկը Հայաստանի համար նշանաւորուեց իր անվտանգութեան համակարգի կարեւորագոյն բաղադրիչի՝ ՀԱՊԿ-ի ղեկավարողի կարգավիճակում ակտիվ եւ արդիւնաւէտ գործողութիւններով: Հայաստանի նախագահութեամբ ՀԱՊԿ խաղաղապահ ուժերի օպերատիւ արձագանքը Ղազախստանի նախագահ Կասիմ-ժոմարտ Տոկաեւի կոչին օրինաւոր

փորձն բացասական արձագանք առաջացրեց թուրքիայում: Հայաստանի գործողութիւնները կարեւոր էին յատկապէս ՀԱՊԿ շրջանակներում ստանձնած առաքելութեան՝ կառուցի նախագահութեան ֆունկցիան: Ղազախստանը փորձաքար էր ՀԱՊԿ կոլեկտիւ գործողութիւններ ծաւալելու եւ նրա դերակատարութեան բարձրացման առումով, որի անհրաժեշտութեան մասին բազմիցս բարձրաձայնել է հենց Հայաստանը:

Ղազախստանի դէպքերը Հայաստանի քաղաքական-հասարակական շրջանակներում ակնկալիքներ առաջացրին, որ յատկապէս 44-օրեայ պատերազմից յետոյ Հայաստանի անվտանգային համակարգի այս կարեւոր բաղադրիչը դարձած կառուցը հնարաւոր կը լինի ի վերջոյ անհրաժեշտութեան դէպքում գործի դնել: Այդ ակնկալիքով էլ Սեպտեմբերի 13-ի ակրեսիայի հենց առաջին ժամերին Հայաստանը դիմեց ՀԱՊԿ-ին՝ իր կանոնադրական պարտաւորութիւնները Հայաստանի հանդէպ կատարելու խնդրանքով: Ռազմաքաղաքական դաշինքից ակնկալուող ռազմական օգնութիւնը չեղաւ, դրա փոխարէն ռազմական գործողութիւնների դադարից յետոյ միայն Հայաստան ժամանեց ՀԱՊԿ դիտորդական-փաստահաւաք առաքելութիւնը: Սեպտեմբերեան իրադարձութիւններին հետեւած ՀՀ վարչապետի ելոյթների ենթատեքստից հնարաւոր եղաւ եզրակացնել, որ ՀԱՊԿ կոլեկտիւ անվտանգութեան արտահերթ նիստերում Ատրպէյճանի ակրեսիան չի դիտարկ-

ուել որպէս ՀԱՊԿ պատասխանատուութեան գօտու վրայ յարձակում, քանի որ ՀՀ-Ատրպէյճան սահմանը յատակցուած է: Դա ընդամէնը նման որոշում կայացնելու իրական շարժառիթները քողարկելու անյաջող փորձ էր, իսկ իրականութիւնն այն է, որ այս ռազմաքաղաքական կառուցի անդամ պետութիւնների ճնշող մեծամասնութիւնը լաւ յարաբերութիւններ ունի Ատրպէյճանի հետ, իսկ կոլեկտիւ անվտանգութեան խորհրդի հանդիպումներից մէկում Պելաուուսի նախագահը յայտարարեց, թէ Ալիեւն «իրենց մարդն է», եւ Հայաստանը պէտք է օգտուի այդ փաստից եւ կարգաւորի յարաբերութիւններն Ատրպէյճանի հետ: ՀԱՊԿ-ից յստակ գնահատական չհնչեց նաեւ սեպտեմբերեան ակրեսիայի վերաբերեալ:

Ուքրանիայի հակամարտութեամբ զբաղուած ՌԴ-ն էլ, բնականաբար, չէր ցանկանում գործել Ատրպէյճանի դէմ՝ դրանով յարաբերութիւնները վատացնելով ՆԱԹՕ-ի անդամ միակ երկրի՝ Թուրքիայի հետ, որ գործընկերային յարաբերութիւններ է պահպանում ՌԴ-ի հետ: ՌԴ-ն սեպտեմբերեան ակրեսիան չդիտարկեց Պաքոնի կողմից նաեւ ՀԱՊԿ-ի, հետեւաբար՝ իր դէմ ուղղուած քայլ, եւ արդիւնքում արդէն Դեկտեմբերին ստացաւ երկրորդ նման գործողութիւնը՝ ռուսաստանեան խաղաղապահ զօրակազմի պատասխանատուութեան գօտում գտնուող Բերձոնի միջանցքի փակումը: Ատրպէյճանն էլ, ոգեւորուելով ՀԱՊԿ-ի ամորֆ եւ միջազգային կառուցնե-

րի մեղմ արձագանքներից, շարունակեց սահմանային սադրանքները, որոնց պայմաններում Հայաստանն արդէն պարտադրուած էր գործողութիւններ ձեռնարկել իր անվտանգային համակարգը դիւրեւս փրկակցելու ուղղութեամբ՝ Փրանսայի աջակցութեամբ ԵՄ դիտորդական առաքելութիւն հրաւիրելով Հայաստան եւ Սեպտեմբերին Երեւանում կայացած ՀԱՊԿ գագաթնաժողովում չստորագրելով համատեղ յայտարարութիւնն ու Հայաստանի համար նախատեսուած աջակցութեան փաստաթուղթը: Իր տարեմուտի ամփոփիչ ասուլիսում ՀԱՊԿ գլխաւոր քարտուղար Ստանիսլաւ Ջասն արդէն պէտք է յայտարարեր, որ հայ-ատրպէյճանական ռազմական բախմանը կազմակերպութեան միջամտութիւնը կարող էր չանգեցնել մեծ կոնֆլիկտի՝ տարածաշրջանի այլ պետութիւնների ներգրաւմամբ:

2022 թ. նշանակալի էր հայ-ատրպէյճանական եւ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման ուղղութեամբ ակտիւ բանակցային գործընթացով եւ հանդիպումներով, այդ թւում՝ երկրների բարձրագոյն ղեկավարութեան մակարդակով: Դրանցում յստակ արդիւնքներ չարձանագրուեցին, բացի նրանից, որ պայմանաւորուածութիւններ ձեռք բերուեցին բանակցութիւնները շարունակելու եւ յաջորդ հանդիպումը կազմակերպելու համար: Սակայն 2022 թ. աւարտուած է նախօրօք պայմանաւորուած երկու հանդիպումները

Շար.ը էջ 6

Երեւանի Զրաժարուճ Ու Մոսկուայի «Մաները»

ԱՎՈՔ ԲԱՂԱԵԱՆ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը աշխատանքային այցով մեկնել է Սանկտ-Պետերբուրգ, որտեղ կայանալու է ԱՊՀ ամենամեայ տարեկան նշանակալի արձագանքը: Ռուսաստանի Դաշնութեան նախագահի խօսնակ Դմիտրի Պեսկովը յայտարարել է, որ սպասում են թէ Փաշինեանին, թէ Ալիեւին, բաց նրանց միջեւ հանդիպում նախատեսուած է: Ալիեւի վաղ, Պեսկովը յայտարարել էր, որ կողմերի ցանկութեան դէպքում Ռուսաստանը դէմ չէ կազմակերպել նրանց միջեւ հանդիպում՝ ոչ պաշտօնական վեհաժողովի հարթակում:

Ըստ ամենայնի այդ ցանկութիւնը չի եղել կամ երկու կողմի, կամ նրանցից մէկի մօտ: Եւ մեծ հաւանականութեամբ՝ Երեւանի: Այդ մասին խօսելու հիմք է այն, որ Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյեանն էլ օրերս հրաժարուել էր մեկնել Մոսկուա եւ եռակողմ հանդիպում անցկացնել Լաւրովի ու Պալաւովի հետ, որի մասին պայմանաւորուածութիւն է եղել դեռեւս Լաշինի միջանցքի փակելուց առաջ: Երեւանը պարզաբանեց, որ այժմ իր առաջնահերթութիւնը Լաշինի միջանցքի բացման հարցը լուծելն է, ինչով թերեւս ակնարկուած էր, որ Հայաստանը չի տեսնում Մոսկուայի միջոցով այդ հարցը լուծելու հնարաւորութիւն, կամ աւելին՝ համարում է, որ Մոսկուան այդ հարցում գործում է Պաքոնի հետ:

Չի բացառոււմ, որ նոյն տրա-

մաբանութեամբ էլ Նիկոլ Փաշինեանն է դէմ եղել Սանկտ-Պետերբուրգում Ալիեւի հետ հանդիպմանը, սակայն այցը Ռուսաստան ընդհանրապէս չի չեղարկել արդէն առաւել մեծ աղմուկից եւ հայ-ռուսական լարումից խուսափելու համար: Բայց, լարումն ակնառու է, եթէ հաշուի առնենք այն, որ ՌԴ արտգործնախարար Լաւրովը Դեկտեմբերի 23-ին Պալաւովի հետ հանդիպումից յետոյ համատեղ ասուլիսում բաւականին կոշտ արտայայտութիւններ արեց նաեւ ԵԱՀԿ կամ ՄԱԿ փաստահաւաք առաքելութիւնների մասին Նիկոլ Փաշինեանի առաջարկութեան վերաբերեալ: Եթէ ՌԴ արտգործնախարարը Ատրպէյճանի նախարարի ներկայութեամբ կոշտ քննադատութեան է ենթարկում ընդհուպ Հայաստանի առաջին դէմքի բարձրաձայնած զաղափարը, ապա սա նշանակում է լարման իսկապէս բարձր աստիճան: Թէ որոնք են, կամ որոնք կարող են լինել սրա պատճառները, շատ է խօսուում, եւ այստեղ բնականաբար ամէնից յաճախ դիտարկուող վարկածը այն է, որ Ռուսաստանը դժգոհ է Արեւմուտքին ներգրաւելու Հայաստանի քայլերից:

Ինչպէս յայտնի է, Հայաստանն էլ այդ քայլերը հիմնաւորում է նրանով, որ չի աշխատում ռուսական միջնորդութիւնը, կամ՝ կամայ, թէ ակամայ աշխատում է Ատրպէյճանի օգտին: Միեւնոյն ժամանակ հարկ է նկատել, որ առայժմ յայտարարութիւններից բացի, Ատրպէյճանի ագրեսիւ քաղաքականութեան դէմ չի աշխատում որեւէ արեւմտեան մեխանիզմ: Ալիեւին,

Եւրամիութիւնը Ատրպէյճանի հետ կնքում է էներգետիկ նոր համաձայնագիր ու յայտարարում վստահելի գործընկեր, այն պարագայում, երբ Պաքոն արգելափակել է Արցախը արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհը: Արեւմուտքի համար իրավիճակն այստեղ առաւել ճկուն է, քանի որ անմիջական կայունութեան եւ հաղորդակցութեան վերահսկման պատասխանատուութիւնը ՌԴ վրայ է, հետեւաբար խաթարումները աշխատում են ՌԴ վարկի դէմ: Ռուսաստանն այդ խաթարումները սաղորդ Ատրպէյճանի դէմ կոշտ չի խօսում, քանի որ առաւել էս ուքրանական պատերազմի համապատկերում Ատրպէյճանն ու Թուրքիան դարձել են չափազանց կարեւոր, Պաքոն ներառեալ նաեւ որպէս իրանի հետ հաղորդակցութեան կարեւոր օղակ: Միւս կողմից սակայն, անվերջ կամ անսպառ չէ նաեւ Հայաստանին ճնշելով Պաքոնի հետ պայմանաւորուելու մեխանիզմի ռեսուրսը, ու այդ իմաստով Մոսկուայի համար կայ մասնակցի անհրաժեշտութիւն, ինչքան էլ հնչի տարօրինակ: Եւ, Երեւանի անհամաձայնութիւնն ու «ընդգլուծմ» այդ իմաստով կարող է տալ այդ մասնակցի հնարաւորութիւնը, միւս կողմից նաեւ այդ կերպ փորձելով սրել իրավիճակի համար Արեւմուտքի՝ գործնական պատասխանատուութիւն ստանձնելու պատրաստանակութեան հարցը: Իրավիճակը բաւականին բարդ ու անկանխատեսելի է, միարժէք դիտուելու համար:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅԱՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՐԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Հայաստանի Տնտեսական Աշխուժութեան Ցուցանիշը Աճած Է 14.4 Տոկոսով

Հայաստանի տնտեսական աշխուժութեան ցուցանիշը 2022 թվականի Յունուար-Նոյեմբերին 14.4 տոկոսով աւելցած է նախորդ տարուան նոյն ժամանակահատվածի նկատմամբ:

Այս մասին կը վկայէ ՀՀ Վիճակագրական կոմիտէի հրատարակած տուեալները:

Արդիւնաբերական արտադրանքի ծաւալը այս տարուան Յունուար-Նոյեմբերին նախորդ տարուան Յունուար-Նոյեմբերի համեմատ աւելցած է 8.4 տոկոսով: Շինարարութեան ծաւալը այս տարի 11 ամսուան մէջ նախորդ տարուան նոյն ժամանակի համեմատ աւելցած է 13.9 տոկոսով:

Առեւտրի շրջանառութեան մէջ Յունուար-Նոյեմբերին 2021-ի նոյն ժամանակահատվածի նկատմամբ յաւելումը կազմած է 16.2 տոկոս:

2022 թվականի 11 ամսուան մէջ մատուցուած ծառայութիւններուն ծաւալը նախորդ տարուան նոյն ժամանակահատվածին նկատմամբ աւելցած է 28.2 տոկոսով:

Իսկ այս տարուան Յունուար-Նոյեմբերին սպառողական գիներու ցուցակը 2021-ի նոյն ժամանակահատվածին համեմատ աճած է 8.7 տոկոսով: Արդիւնաբերական արտադրանքի գիներու ցուցակը Յունուար-Նոյեմբերին 2021-ի 11 ամսուան համեմատ աճած է 2.9 տոկոսով:

Իսկ ելեկտրականութեան արտադրութեան ծաւալը Յունուար-Նոյեմբերին նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ աւելցած է 16.8 տոկոսով:

Արտաքին առևտրաշրջանառութեան ծաւալներուն մէջ 2022-ի Յունուար-Նոյեմբերին նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ արձանագրուած է 67.8 տոկոս աճ, ընդ որում արտահանումը աճած է 75.2 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 63.6 տոկոսով:

Դրամի փոխարժէքը ԱՄՆ տոլարին նկատմամբ Յունուար-Նոյեմբեր ամիսներուն կազմած է 439.40 դրամ:

Հայաստանի Մէջ Սօս 100 Հազար Թափուր Աշխատատեղի Կայ, Որոնք Կը Լրացուին Օտարերկրեացիներով. Վահան Քերոբեան

Մեր հաշուարկներով՝ այսօր Հայաստանի մէջ մօտ 100 հազար թափուր աշխատատեղի կայ, եւ այդ աշխատատեղիները շատ արագօրէն կը լրացուին օտարերկրեացի աշխատողներով: Լրագրողներուն հետ ձեպագրոյցի ժամանակ ըստ տնտեսութեան նախարար Վահան Քերոբեան:

«Այսօր չենք տեսնում այնպիսի դէպք, որ մարդն ուզենայ աշխատել ու չկարողանայ: Թափուր աշխատատեղիները հիմնականում շինարարութեան, հանրային ծառայութիւնների, սպասարկման, գիւղատնտեսութեան ոլորտներում են, ինչպէս նաեւ արդիւնաբերական ձեռնարկութիւններում», յաւելեց նախարարը եւ ընդգծեց, որ մարդիկ պէտք է հասկնան, որ պէտք է անընդհատ սորվին, զարգացնեն իրենց հմտութիւնները:

2022 թվականի Նոյեմբերին հարկման հիմք ունեցող աշխատողներուն թիւը առաջին անգամ գերազանցած է 700 հազարը եւ կազմած է 701.451 մարդ՝ գերազանցելով անցած տարուան նոյն ամսուան ցուցանիշը 47.551-ով: Այս մասին յայտնած է տնտեսութեան նախարարը:



Տնտեսութեան նախարար Վահան Քերոբեան

Միջին աշխատավարձը կազմած է 265.000 դրամ՝ անցեալ տարուան 220.000-ին համեմատ՝ աւելի քան 20% աճ:

Գործող Սահմանադրութեամբ Վարչապետը Փոխզսպող Մեխանիզմ Զկայ. Իրաննիսեան

Սահմանադրական Բարեփոխումներու Յանձնաժողովի նիստին ժամանակ ՀՀ նախագահի հաստատութեան լրագրողութիւններուն մասին զեկոյցի ընթացքին իրաւապաշտպան Դանիէլ Իրաննիսեանը նշեց որ, 2015-ի սահմանադրական բարեփոխումներով դատական, գործադիր եւ օրէնսդիր իշխանութիւններուն միջեւ փոխզսպման եւ հակակշռման մեխանիզմները գործնականին մէջ չեն աշխատիր: Ըստ այդմ՝ ստեղծուած է իրավիճակ մը, որ վարչապետը, իշխող քաղաքական ուժը փոխզսպող գործուն մեխանիզմ գրեթէ չկայ:



Իրաւապաշտպան Դանիէլ Իրաննիսեան

ցուցչական, կամ խորհրդանշական, ՀՀ նախագահին ընտրութեամբ ստացած ենք իրավիճակ մը, երբ խորհրդարանական մեծամասնութիւնը կ'ընտրէ իր համար ցանկալի, ընդունելի անձ, եւ վտանգ կայ, որ վարչապետը քաղաքական կամք պիտի չունենայ որեւէ ձեռով զսպելու, հակակշռելու իրեն նշանակած ուժը եւ գործադիր իշխանութիւնը:

Բարձր Արիւնստագիտութիւններու Ոլորտը Մրցանշային Ցուցանիշեր Արձանագրած Է

ՀՀ Ազգային Ժողովի փոխնախագահ Յակոբ Արշակեան կը համարէ, որ Հայաստանը այլընտրանք չունի, քան ճարտարապետական ոլորտի աւելի ու աւելի արագացող կշռոյթներով զարգացումը:

Արշակեան նման տեսակէտ յայտնեց Դեկտեմբեր 23-ին «Հայաստան-Ճարտարագիտական Հաբթ 2022» միջոցառման պաշտօնական բացման ընթացքին:

Անոր խօսքով՝ բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան ոլորտը այս տարի եւ նախորդ տարիներուն եւս մրցանշային ցուցանիշեր արձանագրած է՝ ազդելով Հայաստանի տնտեսական միջավայրին վրայ: «Հայաստանը այլընտրանք չունի, քան ճարտարապետական ոլորտի աւելի ու աւելի արագացող տեմպերով զարգացումը: Այս տարի Հայաստանն արձանագրել է շուրջ 13 տոկոս տնտեսական աճ: Այդպիսին էին կանխատեսումները: 2022-ին ըստ կանխատեսումների՝ շուրջ 60 տոկոս աճ է լինելու ոլորտում, ինչը նշանակում է, որ աշխատակիցների թուաքանակով կարող ենք խօսել ոչ թէ 20 հազարի կամ 30 հազարի, այլ 40 հազար եւ աւելի զբաղուածների մասին, ինչն իսկապէս տպաւորիչ է: Համախառն ներքին արդիւնքում բարձր տեխնոլոգիական ընկերութիւնների շրջանառութիւնը 5 տոկոսի շրջանակներում կը լինի», ընդգծեց Արշակեան:

Ազգային Ժողովի փոխնախագահին խօսքով՝ ՀՀ կառավարութիւնը մեծ ուշադրութիւն կը դարձնէ գիտութեան ֆինանսաւորման: 2022-ին գիտութեան ֆինանսաւորումը 80 եւ աւելի տոկոսով աւելցած է: Աճը պիտի շարունակուի նաեւ 2023 թվականին:

Պաշտպանական արդիւնաբերութեան ոլորտին մէջ եւս հիմնարար փոփոխութիւններ արձանագրուած են: «Խօսքը մշակուածներից դէպի շարունակական արտադրութեան ցիկը արձանագրուած է: Այստեղ եւս ձեռքբերումներ կան, ինչի վրայ ազդեցութիւն է թողել երկարաժամկէտ պատուէրների հիմնարկի ներդրումը», հաւաստիացուց Յակոբ Արշակեանը:



Ազգային Ժողովի փոխնախագահ Յակոբ Արշակեան

Թեան անցնելու մասին է՝ ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան կողմից շարունակական արտադրութիւնների աննախադէպ ծաւալի պատուէրների իջեցման մասով: Հիմա թիւեր չեն ցանկանում հնչեցնել, սակայն տպաւորիչ արդիւնքներ կան: Արհեստագիտութիւնների մշակուածից անցումը դէպի շարունակական արտադրութիւն նշանակում է նոր տեսակի գիտելիքների ստացում, ոլորտում լոկալիսթիկ արժեքի մասերի գնազոյցման, ապրանքների մշակումից դէպի արտադրութեան անցման, ինչպէս նաեւ արտադրական ենթակառուցուածքների զարգացման առումով որակական անցումներ պէտք է ապահովուեն: Խօսքը նաեւ ռազմական, պետական փորձարկումների եւ արտադրական ընթացքում ապրանքների որակի թեստաւորման փորձարկումների ամբողջ շղթայի մասին է: Այստեղ եւս ձեռքբերումներ կան, ինչի վրայ ազդեցութիւն է թողել երկարաժամկէտ պատուէրների հիմնարկի ներդրումը», հաւաստիացուց Յակոբ Արշակեանը:

Գրիգոր Մինասեան Նշանակուեցաւ Արդարադատութեան Նախարար

Գրիգոր Մինասեան նշանակուեցաւ ՀՀ արդարադատութեան նախարար: Հրամանագրին բնագիրը տեղադրուած է նախագահի պաշտօնական կայքէջին վրայ:

Մինասեանը, որ արդարադատութեան նախարարի տեղակալն էր, պաշտօնէն ազատուեցաւ վարչապետին որոշմամբ:



Արդարադատութեան նախարար Գրիգոր Մինասեան

Արդարադատութեան նախկին նախարար Կարեն Անդրէասեանը պաշտօնէն ազատուած էր այս տարուան Հոկտեմբերի սկիզբը, ապա ընտրուած է Բարձրագոյն Դատական Խորհուրդի (ԲԴԽ) անդամ, զայն առաջադրած էր իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութիւնը: Մէկ օր անց, Խորհուրդին մէջ կայացած զաղտնի քուէարկութեամբ, Անդրէասեանը ընտրուեցաւ ԲԴԽ նախագահ:

մեծ է վտանգը, որ խորհրդարանական մեծամասնութիւնը դատական, սահմանադրական, ընտրական մարմիններու ղեկավար պաշտօններուն կրնայ նշանակել միայն իր ցանկալի անձերը: Հետեւաբար, իրենիսեանի կարծիքով, անհրաժեշտ է փոխզսպող մեխանիզմներ ստեղծել՝ ի դէմս նախագահի հաստատութեան:

ԼՈՒՐԵՐ

Սալիվան Կոչ Ըրած Է Լիարժեք Վերականգնելու Ազատ Տեղաշարժը Լաչինի Միջանցքով

ԱՄՆ մտահոգուած է Լաչինի միջանցքով տեղաշարժի արգելքներով եւ կոչ կ'ընէ լիարժեք վերականգնելու տեղաշարժը:

Այս մասին հաղորդագրութիւն տարածած է Սպիտակ Տունը Միացեալ Նահանգներու ազգային անվտանգութեան հարցերով խորհրդակա ձէյք Սալիվանի՝ Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանի եւ Ատրպէյճանի նախագահի աշխատակազմի Արտաքին Յարաբերութիւններու Վարչութեան պետ Հիքմէթ Հաճիբեհի հետ տեղի ունեցած հեռախօսագրոյցներու բերումով:

«Ազգային անվտանգութեան հարցերով խորհրդակա ձէյք Սալիվան անուանին հեռախօսագրոյցներ ունեցաւ Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանի եւ Ատրպէյճանի նախագահի աշխատակազմի Արտաքին Յարաբերութիւններու Վարչութեան պետ Հիքմէթ Հաճիբեհի հետ: Հեռախօսագրոյցներու ընթացքին անոնք ամփոփեցին Ուաշինկթընի մէջ Սեպտեմբեր 27-ին կայացած իրենց համատեղ հանդիպումէն յետոյ ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի աջակցութեամբ ընթացող խաղաղութեան բանակցութիւններուն մէջ տեղ գտած յառաջընթացը: Բոլորը հաստատեցին իրենց յանձնառութիւնը բանակցային գործընթացին, որուն նպատակը խաղաղութեան համաձայնագրի ամբողջականացումն է», գրուած է հաղոր-



ԱՄՆ անվտանգութեան հարցերով խորհրդակա ձէյք Սալիվան

դագրութեան մէջ: Կը նշուի, որ հեռախօսագրոյցներու ընթացքին ձէյք Սալիվանը երկու կողմին ալ յորդորած է դիտարկել քայլեր, որոնք պիտի մեղմեն լարուածութիւնը եւ հիմքեր պիտի նախապատրաստեն ապագայ բարիդրացիական յարաբերութիւններու համար: «Պարոն Սալիվան փաստեց, որ այս պահուն կը շարունակենք մտահոգուած մնալ Լաչինի միջանցքի տեղաշարժի արգելքներով եւ այդ իրավիճակէն բխող հետզհետէ ծանրացող մարդասիրական հետեւանքներով եւ կոչ ըրաւ լիարժեք վերականգնելու ազատ տեղաշարժը միջանցքով», կը նշուի հաղորդագրութեան մէջ:

Ալիեւը Հայաստանի Նկատմամբ Կը Հնչեցնէ Նոր Տարածքային Պահանջներ. ՀՀ ԱԳՆ Կոչով Կը Դիմէ Շահագրգիռ Գործընկերներուն

Ատրպէյճանի ղեկավարութիւնը որեւէ կերպ շահագրգիռ չէ Հարաւային Կովկասի մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատմամբ, յայտարարած է Հայաստանի Արտաքին Գործերու Նախարարութիւնը՝ վկայակոչելով Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի՝ այսպէս կոչուած «Արեւմտեան Ատրպէյճանի» ներկայացուցիչներու հետ հանդիպման ընթացքին հնչեցուցած միտքերը:

Ալիեւ ըսած է, թէ «նոր ձեւաւորուած Ատրպէյճանական դեմոկրատական հանրապետութիւնը, 1918 թուականին կայացուցած առաջին որոշումներէն մէկով, մեր պատմական քաղաքներէն մէկը՝ Երեւանը նուիրեց Հայաստանին: Այդ աններելի քայլ էր, այդ դաւաճանութիւն էր եւ յանցագործութիւն»: Ան նաեւ խօսած է ատրպէյճանցիներու՝ Սիւնիք վերադարձի մասին:

Ալիեւ ոչ միայն բացայայտօրէն կ'ընդունի ուժի կիրառման միջոցով Հայաստանի ինքիշխան տարածքի բռնագրաւման փաստը, այլեւ՝ Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ կը հնչեցնէ նոր տարածքային պահանջներ եւ ուժի կիրառման սպառնալիքներ, բացայայտ արհամարհանք կը ցուցաբերէ թէ՛ միջազգային իրաւունքի եւ թէ՛ միջազգային գործընկերներու նկատմամբ, կը յայտարարէ Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը:

Ընդգծելով, որ Ատրպէյճանի ղեկավարին յայտարարութիւնները կը հակասեն ֆրակի եւ Սոչիի

մէջ այս տարի ձեռք բերուած պայմանաւորուածութիւններուն՝ Հայաստանի Արտաքին Գործերու Նախարարութիւնը շեշտած է, որ անոնք կ'արտացոլեն Ատրպէյճանի ղեկավարութեան նկրտումները՝ ուղղուած խաղաղութեան գործընթացի վիժեցման:

«Իրականութեան հետ որեւէ աղերս չունեն նաեւ Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման վերաբերեալ ելոյթում հնչեցուած բոլոր հիմնաւորումները: Այս եւ նախկինում Ատրպէյճանի կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դէմ իրականացուած այլ յարձակողական գործողութիւնները Լեռնային Ղարաբաղի ժողովրդին ցեղային գտումների ենթարկելու հետեւողական քաղաքականութեան մասն են», կը յայտարարէ Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը եւ կոչ կ'ընէ միջազգային շահագրգիռ գործընկերներուն՝ հասցէական յայտարարութիւններու եւ թիրախային գործողութիւններու միջոցով պարտաւորեցնելու Ատրպէյճանին դադարեցնել ռազմատենչ եւ առաւելապաշտական հետտրաբանութիւնը, իրագործել իր իսկ կողմէ ստանձնած պարտաւորութիւնները, դուրս բերել ատրպէյճանական զօրքերը Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքէն եւ վերականգնել Լաչինի միջանցքի բնականոն գործունէութիւնը՝ եւս մէկ անգամ ընդգծելով տարածաշրջանին մէջ խաղաղութիւն եւ կայունութիւն կառուցելու հայկական կողմին հաստատականութիւնը:

Մեր Դիրքորոշումը Նոյնն Է՝ Ատրպէյճանի Զօրքերը Պէտք Է Ետ Քաշուին ՀՀ Ինքնիշխան Տարածքէն. Փաշինեան

Կառավարութեան հերթական նիստին վարչապետ Նիկոլ Փաշինեան, անդրադառնալով Լաչինի միջանցքի ճգնաժամին եւ Ատրպէյճանի փորձերուն՝ Հայաստանը մեղադրելու իր ստանձնած պարտաւորութիւնները չկատարելու մէջ, ընդգծեց. «Նման փորձերը սին են եւ հիմնադուրկ, եւ այս թեմային ես բազմիցս եմ անդրադարձել»:

Վարչապետը ըսաւ որ, Ատրպէյճանին փոխանցած է խաղաղութեան պայմանագրի շուրջ իր առաջարկները. «Մենք պատրաստ ենք ստորագրել այդ բովանդակութեամբ պայմանագիրը: Յոյս ունեմ՝ Ատրպէյճանի արձագանգը նոյնպէս դրական կը լինի»:

«Հայկական կողմը դեռեւս ամիսներ առաջ Ատրպէյճանին է փոխանցել սահմանագատման եւ սահմանային անվտանգութեան հարցերով հետագայ աշխատանքների հետ կապուած իր առաջարկները, սակայն մինչ օրս պատասխան չենք ստացել: ՀՀ-ն Ատրպէյճանին է փոխանցել տարածաշրջանային հաճախակցութիւնների վերաբացման վերաբերեալ իր առաջարկները եւ պատրաստ է այդ ճանապարհով գնալ հարցի այսպաղ լուծման: Այդ առաջարկները ներառում են նաեւ ՀՀ բռնագրաւուած տարածքների խնդրի լուծումը: Մեր դիրքորոշումը շարունակում է մնալ նոյնը՝ Ատրպէյճանը պէտք է դադարեցնի ՀՀ ինքնիշխան տարածքների բռնագրաւումը, եւ նրա զօրքերը պէտք է հետքաշուեն ՀՀ ինքնիշխան տարածքից», ընդգծեց վարչապետը: Կառավարութեան հերթական նիստին վարչապետ Նիկոլ Փաշինե-



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան

եան յայտնեց, որ նախորդ շաբաթուրդն էր վեր Լաչինի ճգնաժամը չէ հանգուցալուծուած՝ բացառութեամբ բնական կազմի մատակարարման:

«Ատրպէյճանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման հետեւանքով ԼՂ-ում մարդասիրական իրադրութիւնը մնում է ծայրայեղ լարուած. հարիւրաւոր ընտանիքներ շարունակում են կիսուած մնալ՝ ակամայ յայտնուած լինելով շրջափակման տարբեր կողմերում», նշեց վարչապետը եւ յաւելեց, որ ԼՂ-ի մէջ շարք մը ապրանքներու շարքին նաեւ պարէնի բաց կը նկատուի:

Նիկոլ Փաշինեանի խօսքով՝ Ատրպէյճանը կոպտօրէն կը խախտէ իր ստանձնած միջազգային պարտաւորութիւնները, մասնաւորապէս 2020 թուականի Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան դրոյթները:

Պաշտօնական Երեւանը Կ'ողջունէ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի Անդամներուն Յայտարարութիւնները

Պաշտօնական Երեւանը կ'ողջունէ Միացեալ Ազգերի Կազմակերպութեան (ՄԱԿ) Անվտանգութեան Խորհուրդի (ԱԽ) անդամներուն յայտարարութիւնները, որոնց մէջ անոնց մեծ մասը պահանջեց ապաշրջափակել Լաչինի միջանցքը:

ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան արդարացի եւ սկզբունքային համարած է Անվտանգութեան Խորհուրդի անդամներուն կեցուածքը:

«ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի քննարկումը յստակ ցոյց է տալիս Ատրպէյճանի արգելափակուած Լաչինի միջանցքի անմիջապէս եւ առանց նախապայմանների բացման հարցում միջազգային ուժեղ եւ միանշանակ համախոհութիւնը: Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ անվտանգ եւ ապահով կապը պէտք է վերականգնուի», թուիթթրով գրած է արտաքին գործերու նախարարը:

Նախարար Արարատ Միրզոյեան ընդունած է Արցախի պատուիրակութիւնը՝ արտաքին գործերու նախարարի պաշտօնակատար Դաւիթ Բաբայեանի գլխաւոր-



ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան

րութեամբ: Հանդիպման ընթացքին գրուցակիցները քննարկած են Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքները, Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած մարդասիրական իրավիճակին մանրամասնութիւնները:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՎԵՆԻ ԱԳՔԻՐԸ ԸԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Միջազգային Առաջատար Լրատուամիջոցներ Արձագանգած Են Ստեփանակերտի Մեջ Կայացած Հանրահավաքին

Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակին վրայ Դեկտեմբեր 25-ին տեղի ունեցած համաժողովրդական հանրահավաքը յայտնուած է միջազգային շարք մը առաջատար լրատուամիջոցներու ուղղորդողներու կողմից:

Հանրահավաքին մասին գրած է «Agence France Presse» (AFP) գործակալութեան թղթակիցը: Յօդուածը տարածած են «France 24», «Digital Journal», «Channel News Asia», «RFI» լրատուամիջոցները:

Յօդուածին հեղինակը հակիրճ կը ներկայացնէ Հայաստանի եւ Ատրպեյջանի միջեւ տիրող իրավիճակը, ինչպէս նաեւ Արցախի ժողովուրդին՝ 2 շաբաթ շարունակուող արգելափակումը:

Յօդուածին հեղինակը, վկայակոչելով ՀՀ կառավարութեան, կը նշէ, որ Լաչինի միջանցքի արգելափակումէն յետոյ Լեռնային Ղարաբաղի մէջ յառաջացած է

անուղի, դեղորայքի եւ վառելանիւթի պակաս:

«AFP»-ի թղթակիցը գրուած է Ստեփանակերտի 70-ամեայ բնակչուհի Տոնարա Գաբրիէլեանի հետ, որ շեշտած է, որ Լաչինի միջանցքով Արցախը կը կապուի ոչ միայն Հայաստանի հետ:

«Սա միակ ճանապարհն է, որ կապուի Արցախը մնացած աշխարհի հետ, ոչ միայն Հայաստանի, քանի որ մենք աշխարհի հետ կապուած ենք Հայաստանի միջոցով», ըսած է Տոնարա Գաբրիէլեանը:

Ստեփանակերտի մէջ Կիրակի օր տեղի ունեցած հանրահավաքին անդրադարձած է նաեւ «TACC» լրատուական գործակալութիւնը: Լրատուամիջոցը նոյնպէս ներկայացուցած է վերջին երկու շաբաթներուն Լաչինի միջանցքի արգելափակումը եւ երկու կողմերուն յատարարութիւնները այդ առնչութեամբ:

Երեւանը Արդարադատութեան Միջազգային Դատարանէն Խնդրած Է Միջանկեալ Միջոց Կիրառել Պաքուի Դէմ



Եւրոպական Դատարանի դիմելէ եւ Ատրպեյջանի դէմ միջանկեալ որոշում ստանալէ յետոյ Հայաստանը նոյնանման որոշում կը սպասէ նաեւ ՄԱԿ-ի Արդարադատութեան Միջազգային Դատարանէն, որուն դիմած է Լաչինի միջանցքը շրջափակուելէ յետոյ:

Միջազգային իրաւական հարցերով Հայաստանի ներկայացուցիչին խօսքով, կան բոլոր հիմքերը պնդելու, որ Պաքուն կը շարունակէ խախտել Յեղախնի խտրականութեան բոլոր ձեւերու վերացման ուխտը: Դատարանէն կը խնդրեն միջանկեալ միջոց կիրառել նաեւ Լաչինի միջանցքի հարցով: Թէ ինչ մանրամասն քայլեր պիտի ընեն այս հարցով, առայժմ փակագիծեր չեն բանար:

«Բնականաբար, Լաչինի միջանցքի փակումը հասկանում ենք՝ ինչ նպատակ ունի, հասկանում ենք, որ Արցախի հայաթափմանը միտուած նաեւ քայլ է, հասկանում ենք, որ այստեղ կայ ցեղային ատելութեան տարրը եւ դա, հասկանում ենք, որ ուղղուած է հայերի դէմ, եւ յատուկ ծառայութեան մարդկանց այստեղ ներկայութիւնը,

կամ զինուորա-ոստիկանական ուժերի ներկայութիւնը, գնալ-գալը, կամ կապ ունեցող մարդկանց՝ յատուկ մարդկանց, ընտրուած մարդկանց առկայութիւնն այստեղ նաեւ խօսուած են դրա մասին», ըսաւ Եղիշէ Կիրակոսեանը:

Միջազգային իրաւական հարցերով Հայաստանի ներկայացուցիչը, որ առաջին միջանկեալ դիմումը չէ որ կ'ուղարկէ ՄԱԿ-ի Արդարադատութեան Դատարան, կը պնդէ որ յատկապէս 44-օրեայ պատերազմէն յետոյ, տարբեր առիթներով, Պաքուն կ'ապացուցէ պետական մակարդակով իրականացուող հայատեաց քաղաքականութիւնը:

«Ատրպեյջանում վաղուց արդէն ձեւաւորուած, հաստատութեանական ամենաբարձր մակարդակից սկսած, կայ հայատեացութեան շատ լուրջ քաղաքականութիւն, որը դրսեւորուած է ատելութեան խօսքով՝ թէ՛ կրթական համակարգում, թէ՛ հասարակական կեանքում, բոլորի կողմից, այսինքն՝ ինքը շատ ներծծուած է բոլոր շերտերում հասարակական կեանքի», ըսաւ Եղիշէ Կիրակոսեան:

Ջերմուկի ճոպանուղին Ամբողջութեամբ Վերանորոգուած Է Եւ Պիտի Վերսկասի Գործել



Ջերմուկի ճոպանուղին ամբողջութեամբ վերանորոգուած է, Դեկտեմբեր 25-էն ամբողջութեամբ պիտի գործէ, տեխնիկական անվտանգութիւնը ապահովուած է: Այս մասին Civic.am-ի հետ գրոյցին ըսաւ Ջերմուկի ճոպանուղիի տնօրէն Արմէն Թադեւոսեանը:

Նշենք, որ Սեպտեմբեր 13-14-ին Ջերմուկի ուղղութեամբ Ատրպեյջանի յարձակումին վնասուած էր նաեւ ճոպանուղին:

Արմէն Թադեւոսեանը նշեց, որ բաւական մեծ վնաս հասցուած էր ճոպանուղիին, բազմաթիւ մասեր

սեր այրած էին, շինութիւնները վնասուած էին:

«Յենակէտերի ապակիները, դռները բոլորը կոտորուած էին, այրած բաժիններ կային, բոլորը փոխած ենք, բարեբախտաբար ճոպանը չէր վնասուել: Կառավարութիւնը գումարի մեծ մասը՝ 12 միլիոն դրամ յատկացրեց, վերանորոգեցինք», ըսաւ ան:

Թադեւոսեան ընդգծեց, որ ճոպանուղիով բարձրանալու ժամանակ՝ սարի գլուխէն նկատելի են Ատրպեյջանի զինուորները, հեռաւորութիւնը աւելի քան 5 քմ է:

Հայաստան 10 Թոն Բեռ Ուղարկած Է Արցախ

Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտէի մէկ բեռնատարը Հայաստանէն մօտ 10 թոն բեռ հասցուցած է Արցախ, յայտնած է Լեռնային Ղարաբաղի ԿԽՄԿ առաքելութեան տեղեկատուութեան բաժնի պատասխանատու Էթերի Մուսայէլեանը:

Այն ներառած է մանկական սնունդ, դեղորայք եւ սննդամթերք

առողջապահական հաստատութիւններուն համար:

Բացի այդ, Կարմիր Խաչը Արցախէն տարհանած է 4 օտարերկրեայ քաղաքացի, որոնք քրոնիկ առողջական խնդիրներ ունին եւ կը պատրաստուին մեկնելու իրենց երկիրներ, տեղեկացուց Էթերի Մուսայէլեանը:

Ֆրանսացի Քաղաքական Առաջնորդները

Շարունակուած էջ 1-էն

իշխան տարածքի բռնագրաւումը, ցեղային ատելութեան քարոզը, մշակութային ժառանգութեան ոչնչացումը, խաղաղ բնակչութեան դէմ կրկնուող յանցագործութիւնները, Ֆրանսացի օրէնսդիրները կը նկատեն, որ որեւէ այլ հանգամանքներու մէջ Ֆրանսան կը միջամտէր:

Քաղաքական սկզբունքային տարածայնութիւններ ունեցող օրէնդիրները կը շեշտեն, որ նոյնիսկ իրենք մէկ կողմ դրած են իրենց քաղաքական մրցակցութիւնը, երբ գործը Հայաստանին եւ Արցախին աջակցութիւն յայտնելուն հասած էր, բայց եւ կը խոստովանին, որ Ֆրանսան իր այդ ճիշդ հնչեցուց աւելի քան մէկ դար ուղղուածով: Մինչդեռ Ֆրանսացի յայտնի քաղաքական գործիչ եւ մտաւորական Ժան Ժորեսը 1896 թուականին կոչ կ'ընէր փրկելու հայերը՝ Ֆրանսան մեղադրելով «թափուած արեան, անմարդկային եւ վայրագ արարքներուն» «լուռ, հետեւաբար՝ մեղսակից» ըլլալու համար:

«Արիասիրտ փոքրիկ դաշնակից» Հայաստանի եւ Արցախի շուրջ ստեղծուած իրավիճակին մէջ Ֆրանսական առաջատար քաղաքական ուժերու առաջնորդները էլիզէի պալատի ղեկավարին շարք

մը քայլեր կը յուշեն՝ դատապարտել Ատրպեյջանը միջազգային իրաւունքի դրոյթներու խախտման, Հայաստանի տարածքի բռնագրաւման, պատերազմական ոճրագործութիւններու համար, Արցախի մէջ նախատեսել մարդասիրական ներկայութիւն, Հայաստանին ցուցաբերել անյապաղ անտեսական օգնութիւն, հանդիպել Արցախի ներկայացուցիչներուն, նաեւ Եւրոմիութեան եւ Միացեալ Նահանգներու գործընկերները համոզել ձեռնարկելու նոյն քայլերը եւ միասին Ատրպեյջանի դէմ պատժամիջոցներ սահմանելու:

Ֆրանսացի օրէնսդիրները նաեւ կը յորդորեն երկրի նախագահին աշխատիլ Ստեփանակերտի օդակայանի գործարկման եւ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդին կողմէ միջազգային խաղաղապահ գործախումբ ուղարկելու ուղղութեամբ:

Ֆրանսացի Օրէնսդիր Մարմինի ներկայացուցիչները համոզուած են, որ էմանուէլ Մաքրոնը կրնայ կանխել պատմութեան կրկնութիւնը եւ ապացուցել, որ Ֆրանսան ազատ է եւ կրնայ ձերբազատուիլ քաղաքական կամ տնտեսական կարճատեւ ուղղման վարույթիւններէն՝ յանուն իր մարդասիրական իտէալներու պաշտպանութեան:

Ծերակուտական Սեներտես. «Թուրքիան 77 Միլիոն Տուարի Ձեռք Վաճառած է Պաքուին՝ Անմեղ Հայերու Վրայ Յարձակելու Համար»

ԱՄՆ Ծերակուտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի նախագահ եւ Նիւ ձըրսիի դեմոկրատ ծերակուտական Պոպ Մենենտես անդրադարձած է Թուրքիոյ, մասնաւորապէս, նախագահ Ռեճեպ Թայյիպ Էրտողանին: Ան Սպիտակ Տան ղեկավարին կոչ ըրած է «F-16» կործանիչներ չվաճառելու Թուրքիոյ:



ԱՄՆ Ծերակուտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի նախագահ Ծերակուտական Պոպ Սեներտես
Խօսելով 44-օրեայ պատերազմին մասին՝ Մենենտես նշած է, որ Պաքուի կողմէ սկսած Լեռնային Ղարաբաղի պատերազմի նախօրէին Թուրքիան Ատրպէյճանին վաճառած է 77 միլիոն տուարի գիր-

տուրական սարք, որ օգտագործուած է անմեղ հայերուն վրայ յարձակելու համար:

«Ահա, թէ ինչու զարմանալի էք էրտողանի՝ այս ամառ Թեհրանի մէջ տեղի ունեցած հանդիպումը աշխարհի ամենաղաթման բռնապետերու՝ Ռուսիոյ եւ Իրանի նախագահներուն հետ: Պարզապէս նայեցէ՛ք այն առաջնորդներուն, որոնց հետ ան կը համագործակցի: Հաշուի առնելով այս վերջին գործո-

ղութիւնները՝ ԱՄՆ-ն պէտք է իր «F-16» կործանիչները տայ էրտողանին: Այդ իսկ պատճառով, որ պէս Ծերակուտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի նախագահ, ես պիտի չհաստատեմ Թուրքիոյ «F-16»-ներու մատակարարումը, քանի դեռ ան չէ դադրեցուցած իր նախադրական քաղաքականութիւնը ամբողջ տարածաշրջանին մէջ», եզրափակած է իր ելոյթը ծերակուտականը:

Սպասելով Նոր Զարգացումներու

Շարունակուած էջ 1-էն

րարին առաջնահերթութիւնը Լաչինի միջանցքի անխոչընդոտ գործարկումը եւ Լեռնային Ղարաբաղի մէջ մարդասիրական ճգնաժամին վերացումն է: Երկրորդը՝ Սան Փեթերպուրկի մէջ Փաշինեան և Փութին Ալիեւի հանդիպումն էր եւ որուն մասին ժամանակէ մը ի վեր կը խօսէր Ռուսական կողմը, այդ եւս չկայացաւ: Հայկական կողմը սկսած է համոզուիլ, որ մասնաւորապէս Ալիեւ կը փորձէ Երեւանէն կորզել նոր զիջումներ՝ բանալու համար Լաչինի միջանցքը:

րուն կողմէ, իսկ վերջին օրերուն, Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանի բերնով, երբ ան Հանրային Հեռատեսիլով յայտարարեց որ, Ռուսաստան կը ստիպէ Հայաստանին իր ինքնիշխան տարածքով միջանցք տրամադրել Ատրպէյճանին, ինչպէս նաեւ անդամակցիլ Ռուսիա-Պելաջուսի անվտանգութեան պետութեան: Ան Լաչինի միջանցքի փակումը եւ նոյնիսկ Սեպտեմբերեան պատերազմը կապեց այդ ճնշումներուն հետ: Վարչապետ Փաշինեանի Փութինի ներկայութեան արտասանած խօսքը որ, «Այժմ կը ստացուի, որ Լաչինի միջանցքը չի գտնուիր Ռուսիա խաղաղապահներու վերահսկողութեան ներքոյ», եւս պէտք է դնել այդ ծիրէն ներս:

Արցախը Կը Շարունակէ Մնալ

Շարունակուած էջ 2-էն

վարչապետի եռակողմ յայտարարութեան՝ Լաչինի միջանցքը պէտք է լինի ռուս խաղաղապահների վերահսկողութեան ներքոյ, եւ Ատրպէյճանի Հանրապետութիւնը երաշխաւորել է ուղեւորների, բեռների, մարդկանց անխոչընդոտ տեղաշարժը Լաչինի միջանցքով:

րուն հասցնելու վերաբերեալ: Կարմիր Խաչի բեռնատարով ու միջնորդութեամբ 10 թոն դեղորայք ու անուղ հայաստանէն Արցախ հասած էր: Երջմիկի մասին կէս ամսուան մէջ ամէն օր կը խորանայ անուղի, դեղորայքի, վառելանիւթի ճգնաժամը:

Այժմ ստացուած է, որ Լաչինի միջանցքը չի գտնուում ռուս խաղաղապահների վերահսկողութեան ներքոյ, եւ ցանկանում են քննարկել այդ իրավիճակը, թէ ինչպիսի տարբերակներ կան»:

Այժմ ստացուած է, որ Լաչինի միջանցքը չի գտնուում ռուս խաղաղապահների վերահսկողութեան ներքոյ, եւ ցանկանում են քննարկել այդ իրավիճակը, թէ ինչպիսի տարբերակներ կան»:

Կիրակի օր, հազարաւոր արցախցիներ վերածնունդի հրապարակ հասած էին՝ «Հայաստան, մի երթար գիշումներու», «Խաղաղութիւն կ'ուզենք», «Բացէք ճանապարհը» բազմալեզու պատասաններով:

4. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

Մինչ այդ, Արցախը կը շարունակէ մնալ շրջափակման մէջ: Վերջին օրերուն սպասում կար, որ Երկուշաբթի՝ Դեկտեմբեր 26-ին, Լաչինի միջանցքը փակած ատրպէյճանցիները պիտի հեռանան այդ տեղէն, ճամբան պիտի բացուի:

«Երեք ճանապարհ ունենք», - հաւաքուածներուն դիմած է Արցախի պետական նախարարը, - «Կամ դանդաղ համարկուած ենք Ատրպէյճանին, կամ դուրս ենք գալիս Արցախից, կամ մնում ենք ու պայքարում»: Վարդանեանը իր ընտրութիւնը կատարած է. «Ես այստեղ եմ, ես պայքարում եմ, ու ես այստեղից չեմ գնալու ու չեմ ենթարկուելու Ատրպէյճանի պայմաններին»:

Այժմ հարց կը յառաջանայ թէ արդեօք Հայաստան տեսնելով Ռուսաստանի եւ նախագահ Փութինի դիրքերու տկարացումը՝ Ուրբանիոյ մէջ անոր ծախողումներուն պատճառաւ, պահը եկած կը նկատուի ակտիւ կարծի դիրքորոշում որդեգրելու Մոսկուայի նկատմամբ, թէ կան այլ երաշխիքներ, որոնց վրայ հիմնուելով է որ, Երեւան կ'երթայ այս քայլին:

Ռուսաստանը Հայաստանին Կը Ստիպէ

Շարունակուած էջ 1-էն

դամակցիլ Ռուսիա-Պելաջուսի անվտանգութեան պետութեան: Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան Հանրային Եթերով յայտարարեց, որ Սեպտեմբեր 13-ին Պաքուի կողմէ Հայաստանի ինքնիշխան տարածքները խոչընդոտելու, ինչպէս նաեւ Լաչինի միջանցքի փակումը Հայաստանի վրայ բանեցուող ճնշումներու ծիրին մէջ են: Գրիգորեանի պնդմամբ՝ վերջին շրջանին վառ արտայայտուող հայ-ռուսական յարաբերութիւններու ճգնաժամի հիմնական պատճառը սա է:

Ս. Կոյս Մարիամ խոնարհութեամբ ընդունեց հրեշտակին կողմէ իրեն աւանդուած եւ վստահուած շնորհը՝ իր մէջ կրելու համար Աստուածորդին՝ Յիսուս Մանուկը: Արդ, Ս. Ծննդը այն տօնն է Քրիստոնեայի կեանքին մէջ, որով հաւատքի վերածնունդ կ'ապրինք եւ մեր հոգին լայն կը բանանք մեր մէջ բնակեցնելու համար Յիսուսը, եւ աստուածային բազում շնորհներով զարդարելու մեր կեանքը: Մեզի կը մնայ նմանակցել Ս. Կոյս Մարիամին եւ խոնարհութեամբ ընդունիլ աստուածաշունչ շնորհները՝ զանոնք կեանքի կոչելու մեր առօրեայի ընթացքին:

Ս. Ծննդեան տօնը մեր կեանքին մէջ հրաւերն է նոր կեանքին: Քրիստոնեային համար նորը պայմանաւորուած է Քրիստոսով եւ Քրիստոսի հետ ապրուած կեանքով: Քրիստոսի հետ հոգեւոր ճանապարհորդութեամբ մեր կեանքի բոլոր օրերը պարտ ենք դարձնել նոր, որպէսզի մեր կեանքով դառնանք լոյսի ճառագայթ մը խաւարին մէջ խարխափող մարդկութեան համար:

Արդարեւ, մարդկութիւնը ծարաւի է նոր կեանքի: Աշխարհը կորսնցուցած է իր խաղաղութիւնը եւ ազգեր պատերազմներու մէջ կը սպառեն աստուածատուր իրենց կեանքն ու շնորհները, որոնցմով կարելի է հրաշքներ գործել:

Ս. Ծննդը այն մեծագոյն տօնն է մարդկութեան կեանքին մէջ, որ բոլորիս կը յիշեցնէ Աստուծոյ՝ մարդկութեան կեանքին մէջ ունեցած ներգործութեան մասին, որպէսզի մարդը խոնարհութեամբ անդրադարձն ունենայ եւ դառնայ շնորհընկալ Ս. Կոյս Մարիամի նմանողութեամբ: Քրիստոսի Ս. Ծննդով մեզի կը յայտնուի Աստուծոյ շնորհքով եւ ողորմութեամբ մարդկութեան փրկութեան խորհուրդը խորին, որ մեծագոյն պարգեւ է:

Ս. Ծննդին ընդառաջ հոգեւոր պիտի նախապատրաստուինք



աղօթքով, հոգեւոր ընթացումներով, բարեգործութիւններով, սպաւորներուն եւ հիւանդներուն խնամատարելով, կարօտեալներուն մեր ունեցածն բաժին հանելով: Ասիկա պէտք է ընենք խոնարհութեամբ, լուռ, առանց թեկահարումի, ոչ թէ մեր մնացորդացէն կամ աւելցուկէն, այլ՝ մեր իսկ բաժինէն, մենք զմեզ նեղի դնելով, որովհետեւ ինչպէս Մայր Թերեզան կ'ըսէ՝ «որպէսզի զո՛հաբերութիւնը իրական ըլլայ, զին մը պիտի վճարես անոր համար, պիտի ցաւիս, պիտի ինքնապարպուիս»:

Ս. Ծննդը ընտանեկան տօն է: Հետեւաբար, ընտանիքը պիտի համախմբուի աղօթքով, օրուայ եկեղեցական շարականի երգեցողութեամբ, Յիսուս Մանուկի ծննդեան մասին աւետարանի ընթացքով, եւ մանաւանդ՝ միմեանց նկատմամբ սիրով ու համերաշխութեամբ: Մեզ անհրաժեշտ է առնել ամենապարզ քայլերը մեր գաւակներուն սորվեցնելու խաչակնքում, պարզ աղօթքներ, աւետարաններու սերտողութիւն եւ եկեղեցի յաճախելու բարի աւանդութիւն: Այսօրինակ քայլերը մեր միտքն ու հոգին կը զարդարեն Աստուծոյ սիրովն ու իմաստութեամբ՝ տունը դարձնելով եկեղեցի, օջախ սրբութեան: Եթէ այս քայլերը կեանքի չկոչենք, ապա աշխարհը կը խեղդէ բոլորս նիւթականացած բարքերով: Միշտ պիտի մտաբերենք պատկերը հրեշտակին ու Ս. Կոյս Մարիամի միջեւ կայացած հանդիպման, թէ ինչպէս Աստուածամայրն ընդունեց շնորհը Աստուծոյ կողմէ իրեն վստահուած: Հետեւաբար, Ս. Ծննդը այն մեծ տօնն է, որ մեր մէջ կ'արթնցնէ գիտակցութիւնը Աստուծոյ կողմէ մեզի տրուած շնորհներուն: Ասիկա նաեւ հրաւեր է մեր ազգի գաւակաց ապրելու քրիստոնէական հաւատքով:

Տկարացած ենք մեր հաւատքի մէջ. հարկ է, որ մեր խօսքն ու գործը արտացոլէ Աստուծոյ սէրն ու Քրիստոսի Աւետարանին պատգամները:

Ս. Ծննդի տօնախմբութիւնը կը դառնայ լիակատար, երբ մեր առջեւ որպէս մտատիպար ունենանք Աստուածամօր կերպարը իր խոնարհ ներկայութեամբ, եւ Ս. Կոյսի պէս հոգեւոր գուարթութեամբ դիմաւորենք Յիսուս Մանուկին ծնունդը մեր հոգիներէն ներս:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ. Օրհնեա՛լ է յայտնութիւնը Քրիստոսի:

Արեւելեան Թեմի Առաջնորդ Տ. Մեսրոպ Վարդապետ Պարսամեանի Ա. Ծննդեան Պատգամը Եւ Զայն Պիտի Կոչեն Էմմանուէլ

Ահա կոյսը պիտի յղանայ եւ որդի մը պիտի ծնի. եւ զայն պիտի կոչեն Էմմանուէլ, որ կը թարգմանուի՝ Աստուած մեզի հետ: (ՄԱՏԹ. Ա. 23)

Սիրելիներ, մօտ օրէն պիտի դիմաւորենք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Ծննդեան տօնը, եւ այս առիթով կը փափաքիմ ողջունել ձեզ՝ բոլորիդ փոխանցելով իմ օրհնութիւնս եւ սրտաբուխ սէրս: Այսպիսի առիթով, այնքան կը փափաքիմ ձեր հետ ըլլալ, մեր սքանչելի ժողովուրդին հետ աղօթելու եւ միասիրտ տօնելու Քրիստոսի Սուրբ Ծնունդը: Գիտեմ, որ այդ շուտով տեղի պիտի ունենայ:

Սուրբ Ծնունդի տօնախմբութեանց կարեւոր մասն է իրարու հետ ըլլալ: Այս օրերուն աւելի եւս կը ցանկանք ըլլալու մեր եղբայրներուն եւ քոյրերուն հետ, մեր ծնողաց եւ զաւակաց, մեր հարազատներուն, ընտանեկան պարագաներուն եւ սիրեցեալներուն հետ:

Միասին ըլլալու մարդկային այս իրձը աւելի խորիմաստ կը դառնայ Աւետարանի լոյսին տակ: Յիսուսիմասին առաջին յայտնութիւններէն մին, նոյնիսկ իր ծնունդէն առաջ, սա մարգարէութիւնն է որ յիշուած է Մատթէոսի աւետարանին մէջ. «Ահա կոյսը պիտի յղանայ եւ որդի մը պիտի ծնի. եւ զայն պիտի կոչեն Էմմանուէլ, որ կը թարգմանուի՝ Աստուած մեզի հետ»:

Ինչ գեղեցիկ եւ յուսադրիչ յայտնութիւն. «Աստուած մեզի հետ»:

Մեծ Ուրախութեան Աւետիսը (Ս. Ծնունդ)

«Մի՛ վախնաք, վասն զի ահա ես ձեզի մեծ ուրախութեան աւետիս մը կու տամ, որ բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ: Այսօր Փրկիչ մը ծնաւ Դաւիթի քաղաքին մէջ, որ Օծեալ Տէր է» (Ղուկ. 2:10-11):

Ասկէ աւելի քան քսան դարեր առաջ, զիշեր մը Բեթլեհէմի դաշտերուն մէջ երբ հովիւներ իրենց հօտերուն պահակութիւն կ'ընէին, Աստուծոյ հրեշտակը անոնց երեւցաւ եւ Աստուծոյ փառքը լոյսի պէս անոնց վրայ ծագեցաւ: Բնականաբար հովիւները սաստիկ վախցան, որովհետեւ անսովոր, վախազդու եւ անբացատրելի տեսարանի մը ականատես կ'ըլլային: Նմանօրինակ բան մը երբեք պատահած չէր իրենց կեանքին մէջ:

Սակայն, հրեշտակը հանդարտեցուց հովիւները ըսելով. «Մի՛ վախնաք, Ձեզի մեծ ուրախութեան աւետիս մը պիտի տամ, որ ամբողջ ժողովուրդին մեծ ուրախութիւն պիտի պատճառէ: Այսօր Դաւիթի քաղաքին (իմա Բեթլեհէմի) մէջ Փրկիչ մը ծնաւ որ Օծեալ Տէր է»:

Հաւանաբար հովիւներ լսած էին, որ Աստուած օր մը հրեայ ժողովուրդին Մեսեայ մը պիտի դրկեր ազատագրելու գիրենք: Բայց հրեշտակը կը հաղորդէր, թէ ծնող մանուկը բոլոր մարդոց Փրկիչը պիտի ըլլայ:

Մեծ ուրախութեան աւետիսը այն էր, որ Յիսուս Քրիստոսի ծննդեան այդ շնաշխարհիկ օրը տիեզերքի Արարիչը երկինքէն երկիր կու գար որպէս զի յեղաշրջէ



հետ» Այս է ահա որ կը զատորոշէ Քրիստոնէութիւնը բոլոր այլ կրօնքներէ եւ զաղափարաբանութիւններէ: Այս խոստումը կը նշանակէ որ Աստուած մեր կողքին է, զիտէ մեր յոյսերն ու յուսախաբութիւնները, մարդկային կեանքի մեր հրճուանքներն ու ցաւերը: Աստուած, իր Որդուն՝ Յիսուս Քրիստոսի մարդեղութեամբ, մասնակից դարձաւ իր ստեղծագործութեան կեանքին: Եւ ասով իսկ սրբացուց կեանքը: Իր սէրը մեզի հանդէպ կը մեծարէ եւ կ'օրհնէ մեզ որպէս բացառիկ անհատականութիւններ:

Քրիստոսի անունը, «Էմմանուէլ. Աստուած մեզի հետ» հաստատումն է թէ Աստուած հեռու չէ մեզմէ այլ իրապէս մօտ է մեզի:

Շար.ը էջ 15



համայն մարդկութեան պատմութիւնը եւ մարդոց ճակատագիրը: Այո՛, Սուրբ Ծնունդի այդ գիշերը անցած դարերու վեհագոյն յոյսերը կ'իրականանային երբ Աստուած մուտք կը գործէր այս մոլորակին վրայ՝ իր եւ մարդոց միջեւ խզուած յարաբերութիւնը վերահաստատելու եւ անոնց նոր կեանք պարգեւելու:

Այս աշխարհի մեծագոյն դժբախտութիւնը Աստուծմէ հեռու մնալու իրականութիւնն է: Ոչ մէկ հիւանդութիւն, ոչ մէկ շարժաբանք, ցաւ ու տուժալտանք այնչափ ահաւոր եւ քստմնելի է որչափ մեղքը, որ Աստուծմէ բաժնուելու եւ հեռանալու ահաւոր իրականութիւնն է: Անտարակոյս, մեղքը մարդկային ընկերութեան մեծա-

Շար.ը էջ 15

Կենսագրութիւն/Մահագրութիւն Ազգային Մեծ Բարերար Եղուարդ Աւետիսեանի 1937-2022

Եղուարդ Աւետիսեան կեանքէ հեռացաւ Դեկտեմբեր 7-ի երեկոյեան՝ շրջապատուած իր սիրառատ ընտանիքով : Ան փամելա Վուու (Pamela Wood) Աւետիսեանի սիրելի ամուսինն էր: Եղուարդը Հայոց Ցեղասպանութիւնէ վերապրողներ՝ Խորէն եւ Շուշանիկ (Ինկիլիզեան) Աւետիսեաններու երրորդ զաւակն էր, որ ծնած էր Ռօտ Այլընտի (Rhode Island) Փոթաքէթ (Pawtucket) քաղաքին մէջ: Էդը հասակ առաւ Փոթաքէթի բանուորական փլէզէնդ Վիուի (Pleasant View) թաղամասին մէջ, ուր բազմաթիւ ներգաղթեալ ընտանիքներ կը բնակէին: Այնտեղ ան յաճախած է հանրային դպրոցներ եւ եղած է իր աւարտական դասարանի նախագահը՝ 1955 Pawtucket East (Tolman) High School-ի: Իր կրթութիւնը շարունակած է Պոսթոնի (Boston) Համալսարանին մէջ՝ կրթաթոշակով, ուր ան ստացած է Պաքալորիայի եւ Մագիստրոսի վկայականները երաժշտութեան ճիւղին մէջ՝ 1959 եւ 1961 թուականներուն: Ան նաեւ ստացած է RCA կրթաթոշակ նուագախմբային խորացում ուսուցման համար՝ Թէնկլիվուուի (Tanglewood) մէջ՝ Պոսթոնի սիմֆոնիկ նուագախումբի (Boston Symphony Orchestra) ամառնային կեդրոնը: Ան երկու անգամ նշանակուած է Ֆրոմմի անդամ (Fromm Fellow) Թէնկլիվուուի ժամանակակից երաժշտութեան ներկայացումին համար՝ Ահարոն Բոպիլանտի (Aaron Copland) ղեկավարութեամբ, եւ 1962 թուականին Եւրոպայի իր ելուցներուն համար ստացած է Ամերիկեան Ազգային Ակադեմիայի Մրցանակ (American National Theater Academy Award):



րուն, ուր գրած եւ յաջողութեամբ բանակցած է առաջին միութենական պայմանագիրները երկու կազմակերպութիւններուն համար:

Պոսթոնի Փափա Էսփլանէյտ Նուագախումբին հետ իր աշխատանքի ընթացքին Արթուր Ֆիդլերի (Arthur Fiedler), ձան Վիլլիամսի (John Williams) եւ Քիթ Լոքհարտի (Keith Lockhart) ղեկավարութեամբ ան որպէս հիւր հանդէս եկած է Միացեալ Նահանգներու բազմաթիւ այլ վայրերու մէջ, ինչպէս Hollywood Bowl, Carnegie Hall, Lincoln Center, Wolf Trap, Ravinia, Tanglewood եւ մասնակցած է երկու շրջագայութիւններու ղէպի ձափոն: Բացի ելուցէ, ան ծառայած է որպէս նուագախումբի անձնակազմի վարիչ՝ նուագախումբի հիւրախաղերու համար: Էդ կ'ուղեկցեր բազմաթիւ շնորհալի կատարողներու, երաժշտութեան բոլոր ժանրերէ, անոնց շարքին՝ Aerosmith-ը, Whitney Houston-ը, Tony Bennett-ը, Luciano Pavarotti-ն, Leonie Price-ը եւ Նույնիսկ Big Bird-ը: Իր երաժշտական աշխատանքի ընթացքին ան նաեւ սրինգ դասաւանդած է Պոսթոնի Համալսարանին ինչպէս նաեւ Էնդիկոթ (Endicott) Գոլէճին մէջ՝ ուր ծանօթացած է փամելա Վուուի, որ հետագային դարձած է իր կինը եւ կեանքի ընկերը աւելի քան 44 տարիներ:

Իր երաժշտական աշխատանքի ընթացքին էդը շատ մը ընկերութիւններու մէջ լուռ դրամարկու (investor) էր, տեխնոլոգիանէ (technology) մինչեւ առողջապահութիւն: Ան ամէն օր կը կարդար առեւտրական հրատարակութիւններ եւ երկար ճամբորդութիւններու ընթացքին հետը կ'ուսնենար նման յօդուածներ եւ այլ հրատարակութիւններ օգնաւորին մէջ կարդալու: Էդ ինքնուսուցչ էր եւ իւրամտօրէն ներդրումներ կը կատարէր, որով դանդաղօրէն կրցաւ բաւական դրամական միջոցներ հաւաքել, կեդրոնանալու իր յաջող դարարքին՝ մարդասիրութեան վրայ:

Եղուարդի բարեգործութիւնը կեդրոնացած էր կրթութեան, երաժշտութեան եւ բժշկութեան վրայ: Անոր առաջին մեծ ջանքը իր ծնողները յարգելն էր եւ կրթութեան կարեւորութիւնը, որ սերմանուած էր անոնց չորս զաւակներէն իւրաքանչիւրին մէջ: 1994-ին, իր մօր 90-րդ տարեդարձը նշելու համար, ան յայտարարեց, որ ինքը եւ փամելան Հայաստանի մէջ պիտի հիմնեն հանրակրթարան դպրոց մը, որ պիտի կոչուի Խորէն եւ Շուշանիկ Աւետիսեան վարժարան: Դպրոցը բացուեցաւ 1999-ին՝ 75 աշակերտով (3, 4 եւ 5 տարեկան-

ներու համար՝ իւրաքանչիւր դասարանի մէջ 25 երեխայ), որ կը գտնուի Երեւանի ամենհամեստ թաղամասերէն մէկուն՝ խորհրդային ժամանակաշրջանի շէնքի մը մէջ: Ամէն տարի դասարան մը կ'աւելնար, որպէսզի այդ երեխաները կարողանան շարունակել իրենց ուսումը, այն աստիճան որ այլեւս տեղ չկար: 2014-ին, նոյն շրջանին մէջ բացուեցաւ նորակառուց Silver Leed-certified հաւատարմութեամբ դպրոցը, նախատեսուած մանկապարտէզէն մինչեւ 12-րդ դասարաններ՝ մօտ 1000 աշակերտի համար: Դպրոցը առաջին Leed վկայագրուած շէնքն է ոչ միայն Հայաստանի, այլեւ ամբողջ Կովկասեան տարածաշրջանին մէջ: Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան վարչական Խորհուրդի երկարամեայ անդամ ըլլալու կողքին, էդը խորապէս ներգրավուած մնաց Աւետիսեան վարժարանի գործունէութիւններուն մէջ, որ օգնեց ամրապնդել դպրոցի բարձր եւ գովելի համբաւը:

Որքան որ էդը ռազմավար էր իր ներդրումներով, նոյնքանով էր իր բարեգործութեամբ: Ան միտումնաւոր հիմնեց Աւետիսեան դպրոցը անապահով թաղամասի մը մէջ, որպէսզի երեխաները կարենան անվճար ստանալ լաւագոյն կրթութիւնը՝ դպրոցական համագրեւտի եւ օրական երկու անգամ սնունդի հետ միատեղ: Դպրոցը կրնայ ընդունիլ միայն իր թաղամասի աշակերտները: Վարժարանը արժանացած է մեծ գնահատանքի՝ արժանանալով բազմաթիւ ակադեմիական մրցանակներու, ներառեալ դպրոցի տնօրէնը՝ որ երկու անգամ ճանչցուած է լաւագոյնը Հայաստանի մէջ: Եղուարդը նաեւ մեծապէս ներգրավուեցաւ Հայաստանի Ամերիկեան Համալսարանին հետ՝ ծառայելով անոր հոգաբարձունեւոր Խորհուրդին մէջ՝ միաժամանակ անուանակոչելով Փարամագ Աւետիսեան շէնքը իր հանգուցեալ եղբոր անունով եւ անուանակոչելով նոյն Համալսարանի գերազանց կեդրոնները ի պատիւ իր քրոջ՝ Զուարթ Աւետիսեան Օնանեանի եւ եղբոր Փոլ Աւետիսեանի: Այդպէս ընելով ան կապ հաստատեց Աւետիսեան վարժարանի եւ Հայաստանի Ամերիկեան Համալսարանի միջեւ՝ ստեղծելու խորովակ մը, որու միջոցով աւագ դասարանի արժանաւոր շրջանաւարտները կը կարողանան անվճար ստանալ Գոլէճի կրթութիւն: Եղուարդը աւելի քան 40 այցելութիւններ կատարած է Հայաստան՝ ուղեկցելով իր մօր, վերահսկելու իր նախագիծերը, ներկայ գտնուելու դպրոցական միջոցառումներուն, աւարտական հանդէսներու եւ մասնակցելու վարչական Խորհուրդի նիստերու:

Անլոր բարեգործութիւնը ուղղուած էր նաեւ իր ծննդավայր Ռօտ Այլընտի եւ Մէսչուսէթս նահանգներու ակադեմիական եւ մշակութային հաստատութիւններուն, ուր ան անուանեց Փարամագ Աւետիսեան շէնքը Ռօտ Այլընտի Համալսարանի Դեղագործական Գոլէճը, Ռօտ Այլընտ Համալսարանի Զուարթ Օնանեան անուան բուժքոյրերու դպրոցը եւ վարդան կրէկորեան շէնքը Հայկական Ուսումնասիրութիւններու եւ Հետազոտութիւններու Ազգային Կազմակերպութեան (NAASR)՝ Մասաչուսէթսի Պելմոնթ (Belmont, Massachu-

setts) քաղաքին մէջ՝ ուր ան ծառայած էր որպէս կազմակերպութեան վարչական Խորհուրդի անդամ: Եղուարդը Պոսթոնի Բալէթի Նուագախումբին (Boston Ballet Orchestra) շնորհած է չորս ամպիոն՝ յարգելու իր նախկին գործընկեր երաժիշտները, եւ օգնած է ապահովելու, որ անոր արտադրութիւնները միշտ ներառեն կենդանի երաժշտութիւն՝ արհեստավարժ նուագախումբի կատարողութեամբ: Անոր վերջին նուիրատուութիւնը իսկապէս փոխակերպիչ էր, երբ Սեպտեմբեր ամսուն ան անուանեց Պոսթոնի Համալսարանի Արամ Վ. Զոպանեան եւ Եղուարդ Աւետիսեան անուան բժշկական դպրոցը՝ ի պատիւ իր տարիներու ընկերոջ՝ Պոսթոնի Համալսարանի նախկին նախագահ եւ աւագ ուսուցչապետ:

Եղուարդը ստացած է Էլլիս Այլընտի (Ellis Island) շքանշանը եւ երկու պատուաւոր Դոկտորի կոչում՝ Ռօտ Այլընտի եւ Պոսթոնի Համալսարաններէն: Հայաստանի նախկին նախագահ Սերժ Սարգսյանը երկու անգամ անոր պարգևատրած է Մովսէս Խորենացի մետալով, կրթութեան, մշակութի, գրականութեան եւ արուեստի մէջ իր ունեցած աւանդին համար: Հայաստանի Ամերիկեան Համալսարանը Եղուարդին շնորհեց իր անդրանիկ Նախագահի Յանձնարարութեան մրցանակը, ինչպէս նաեւ Պոսթոնի Համալսարանի Գեղարուեստական Գոլէճի կողմէ պարգևատրուեցաւ Վաստակաւոր Շրջանաւարտի մրցանակով:

Էդի միւս ջանքերը կը ներառեն հնաոճ եւ դասական ինքնաշարժեր հաւաքել, նախ՝ որպէս երիտասարդ, երբ ան կարիքը ունէր Պոսթոնի Համալսարանը երթեկեկելու: Այդ ինքնաշարժը՝ աւելի քան 55 տարիներու կեանք ունեցող 1931-ի Ford Victoria-ն էր, որ ան վերջերս նուիրեց Միչիկըն (Michigan) նահանգի Ֆորտ թանգարանին (Ford Museum): Այդ ընթացքին ան սորվեցաւ վերանորոգել այդ ինքնաշարժերը, ինչ որ անհրաժեշտ էր զանոնք վարելու համար, եւ ի վերջոյ ան եւ փոթաքէթէն իր սիրելի ընկերը, միասնաբար եղան վեց Model As-ի համասեփականատէրեր: Ան եւ փամելան զուարճանալով իրենց 1929-ին Model A Ford-ով շրջեցան New England-ի նահանգներուն մէջ եւ 1987-ին քչեցին Պոսթոնէն մինչեւ Սիեթլը (Seattle), ժամական 45 մղոն առաջութեամբ: 1931-ի ռոտսթերը (roadster)՝ որ ան եւ փամելան յետագային ձեռք բերին, նկարահանուած է Ragtime-ի Boston Pops Esplanade ներկայացման մէջ: Աւելի ուշ ան գնած եւ վերանորոգած էր 1941-ի Lincoln Zephyr-ը, որը արժանացած է Lincoln Continental Owners' Club-ի ազգային հանդիպման լաւագոյն ցուցադրութեան, որ նոյնպէս վերջերս նուիրեց Լինքընի թանգարանին (Lincoln Museum), Միչիկընի (Michigan) նահանգի մէջ:

Բացի իր տիկնոջ փամելայէն, իր վերապրող հարազատներն են քոյրը՝ Զուարթ Օնանեանը, Եղբայրը՝ Փոլ (Էստա) Աւետիսեանը, գորքանչը Ֆիլլիս Վուուը (Phyllis Wood), քենիները՝ ձոյս Կլենին (Joyce Glenney) եւ ձենիս Ադգինսը (Janice Adkins), իր քենակալը՝ Կորտըն

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Շաբաթօրեայ Վարժարանի Մեծ Աւետիսը



17 Դեկտեմբեր 2022, Շաբաթ օր ցնծութիւն կը տիրէր Քալիֆորնիոյ Փասատենա քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ շաբաթօրեայ վարժարանի մէջ: Դպրոցի 30 սանիկները, իրենց ուսուցչուհիներու առաջնորդութեամբ, ծնողներու եւ հիւրերու ներկայութեամբ կատարեցին Սուրբ Մննդեան եւ Ամանորի հանդէս մը ու վայելեցին այդ կրկնակ տօներու բարիքները:

Յիսուս մանուկի վայելչքը Դպրոցական ամենամեայ հանդէսը սկսաւ նոյնանուն եկեղեցւոյ մէջ: Աշակերտները նախ լսեցին - կամ դիտեցին - ծուխի հովիւ Սարգիս աւագ քահանայ ֆեթոյեանի փոխաբերական պատկերներով հարստացած Ս. Մննդեան պատգամը: Փոքրիկներու ուղղուած այդ հաճելի խօսք-տեսարանը զմայլելիօրէն պարզ ու հասկնալի էր բոլոր երեխաներուն համար: Աւագ քահանան իր բեմ բերած փոքրիկ վարդազոյն օղանաւով, խաւաքարտէ կազմուած «Ձուարթնոց» օղակայանով բացատրեց, թէ տաճարը կայարան մըն է, հաւատացեալները՝ ուղեւորներն են, իսկ մանուկ Յիսուսը այդ միջոցն էր, որմով կարելի էր հասնիլ արքայութեան:

Մանուկներ կ'երգեն աւետիս աշխարհի

Աշակերտները ապա բեմ ելան ու լիաթոք երգեցին Մննդեան երգեր ու շարականներ, կատարուեցաւ խոստովանանքը, ապա բոլորը ընդունեցին Սուրբ Հաղորդութիւնը: Տէր Սարգիսին սպասողներն էին դպրոցի աշակերտները: Դպրոցի ուսուցչուհիներէն Տիկին Ազնիւ Աէրալտարեանի մենակատարած շարականներով ալ այդ պահը դարձաւ աւելի հոգեգրաւ:

Կաղանդ Պապային շրջապ-

տոյտը Օրուան երկրորդ բաժինը տեղի ունեցաւ եկեղեցական համալիրի Տունայեանց սրահի մէջ: Զարդարուած, լուսավորուած, ընտանիքներով եւ հիւրերով լեցուած սրահը ալեկոծուեցաւ երգ ու պարով: Աշակերտները ցնծազին երգերով ու ծափերով սպասեցին որ «Կաղանդ պապան» գայ ու իրենց նուէրներ բերէ... Ու յանկարծ, ալեհեր, սպիտակամօրուս կաղանդ պապան յայտնուեցաւ դարպասի առջեւ, կարմիր տոպրակ մըն ալ ուսին:

Կաղանդ Պապան բացատրեց, թէ ինչո՞ւ քիչ մը յոգնած եւ ուշացած էր: Ան հեղինակաւոր ձայնով բացատրեց, թէ նախ նուէրներ տարած էր Հայաստան, ուրախացեր էին հայրենի մանուկները, ապա ովկիանոսը անցած, հասած էր Քալիֆորնիա, իսկ հիմա պիտի շտապէր Ստեփանակերտ, որպէսզի Արցախի երեխաներն ալ անպայման ստանային իրենց նուէրները: Մեր աշակերտներն ալ խնդրեցին, որ Կաղանդ Պապան իրենց արցախցի քոյր-եղբայրներուն տանի իրենց բարեւներն ու բարեմաղթութիւնները:

Խաղաղութեամբ ձաշակեցէք Մնողներու առատաձեռնութեան եւ խոհարարական տաղանդի շնորհիւ պատրաստուած էր տօնական ճոխ սեղան: Ամբողջ սրահը, աշակերտներու զիլ ձայներու առաջնորդութեամբ աղօթեց «ձաշակեցուք»ը, որպէսզի աշխարհի վրայ ամէն հայ մանուկ ընտանեկան ջերմ եւ խաղաղ երդիքի տակ սեղան նստի ու վայելէ Տիրոջ պարգեւած շնորհները:

Օրը վերջացաւ երգերով, ուրախ պարերով ու սիրալիւր զրոյցներով:

Ազգային Մեծ Բարերար Եղուարդ Աւետիսեան

Շարունակուած էջ 13-էն

Վուտը (Gordon Wood), երեք սերունդի զարմուհիներ եւ եղբորդիներ, բազմաթիւ զարմիկներ, որոնք նման են քոյր-եղբայրներու եւ սիրելի ընկերներու՝ մէկ ընտանիքի նման: Եղուարդէն առաջ մահացած նախորդները եղած են անոր եղբայրը՝ Փարամազը, հարս քոյրը՝ Սարանել Աւետիսեանը եւ քենակալը՝ Եղուարդ Օնանեանը:

Եղուարդին Յիշատակի հանդիսութիւնը պիտի կատարուի գարնան: Փոխան ծաղկեպսակի, իր

յիշատակին նուիրատուութիւններ կարելի է կատարել Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան՝ Աւետիսեան Դպրոցի հիմնադրամին:

Առցանց նուիրատուութիւններու համար կրնաք այցելել մեր կայքէջը՝

<http://weblink.donorperfect.com/InMemoriamAvedisian> կամ նուիրատուութիւններ ուղարկէք AMAA-ին՝ 31 W. Century Road, Paramus, NJ 07652 հասցէով, նշելով՝ Avedisian School Endowment Fund:

«Յրեշտակներն Աւետիս Տուին» Կլենտլի Դայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցւոյ Մէջ



Հովանաւորութեամբ Արհիպատիւ Ս. Միքայէլ Եպիսկոպոս Սուրբատեանի, Կիրակի, 18 Դեկտեմբեր 2022-ի երեկոյեան ժամը 5:00-ին, Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ Ս. Մննդեան համերգ, մասնակցութեամբ Հայ Քոյրերու Վարժարանի, International Music School-ի եւ Glendale Youth Orchestra-ի աշակերտներու:

Բացման խօսքով հանդէս եկաւ Հայ Քոյրերու Վարժարանի փոխնորէնուհի տիկին Ռիթա Պոյաճեան՝ ընդգծելով, որ «Յիսուս Քրիստոսի ծնունդի նշումը տարուան ընթացքին պէտք է ըլլայ մեր կեանքի այն անկիւնադարձային թուականը, որ մեզ պիտի մղէ մտածելու Աստուծոյ կողմէ մեզի շնորհուած կեանքի պարգեւին մասին: Թէ ինչպէ՞ս մեր երկրաւոր կեանքը կ'ապրինք, որքանո՞վ կը հետեւինք Քրիստոսի օրինակին, որքանո՞վ կը գործադրենք մեզի տրուած պատուիրանները, որքանո՞վ կ'արժեւորենք մեր փրկութեան համար աշխարհ եկած Աստուածորդիին պատգամները»: Տիկ. Պոյաճեան յորդորեց նմանիլ մեր Փրկիչին՝ «ըլլանք խոնարհ, համեստ, ներողամիտ, ողորմած եւ սիրալիւր: Այս լուսավոր օրը, երբ փառաբանութիւններով, շարականներով ու երգերով պիտի նշենք ճշմարիտ լոյսին, բարի հովիւին, մարդասէր Աստուածորդիին սուրբ ծնունդը, մաղթելով որ Յիսուս Քրիստոսը այսօր ծնի մեր բոլորին սրտերուն մէջ եւ իր ծնունդով բերէ յոյս մեր սրտին, լոյս՝ մեր մտքին, ուրախութիւն՝ մեր սրտին եւ խաղաղութիւն՝ մեր հոգիին»:

Ան իր խօսքի աւարտին մաղթեց յատուկ աղօթք բարձրացնենք առ Աստուած, որ խաղաղ երկինք եւ անվտանգ օրեր շնորհէ մեր հայրենիքին՝ Հայաստանին ու Արցախին:

Գեղարուեստական յայտագրին սկիզբը Հայ Քոյրերու վարժարանի պարախումբը՝ ղեկավարութեամբ Տիկ. Լուիզա Խաչատրեանի, ներկայացուց Արամ Խաչատուրեանի «Վալս»ը, որուն յաջորդեց «Joy to the World» եւ «Gloria in Excelsis» նուագները կատարողութեամբ Սթիվըն եւ Քրիսթոֆըր Այնթապլեաններու: Խումբ մը աշակերտներ՝ Քրիսթոֆըր Միքայէլեան, Կրէկորի Ետկարեան, Միլանա Շերեան, Շանթ Քոնանեան եւ Վերոնիքա Առոյեան կատարեցին «O Holy Night» երգը, այնուհետեւ

Արեւ-Մարիա Պոյաճեան ջութակի նուագով ներկայացուց «Ave Maria»-ն, իսկ Մարք Մըրիսեան դաշնամուրով՝ «Arabesque»:

Վարժարանի պարախումբը ներկայացուց եւս պար մը՝ «All I want for Christmas is You»: Նուագներու շարանով հանդէս եկան Ալեքսիա Թորոսեան դաշնամուրով՝ «Gill's Boop Sha-Bop!», Տավիտ Միքայէլեան տուտուկով՝ «Քանի վուր ջանիմ», Կիսանէ Թադեոսեան ջութակով՝ «Folk Songs» եւ Տիգրան Յարութիւնեան դաշնամուրով՝ «Prelude No.6, in c# minor»: Սիլվի Գասպարեան ներկայացուց հայկական պար մը՝ տուտուկի նուագակցութեամբ:

Յայտագրի վերջին բաժնով Հայ Քոյրերու Վարժարանի երգչախումբը՝ ղեկավարութեամբ Տիկ. Կարինէ Տէր Գէորգեանի, ներկայացուց «Խորհուրդ մեծ», «Գիշերն իջաւ», «Պատրաստել ենք մենք Նոր տարուան հանդէս», «Կենաց երգ» եւ «Joy to the World» երգերը, աւետելով Քրիստոսի Ս. Մննդը:

Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ ժողովրդապետ գերյարգելի Հայր Բարսեղ Մ. Վրդ. Պաղտասարեան խօսք առնելով՝ ըսաւ. «Այսօր մենք խաղաղութեան Իշխանին տօնն է որ կը տօնենք, երբ բոլորս ալ խաղաղութեան կարիքը ունինք մեր փոքրիկ ընտանիքներուն մէջ, մեր բարեկամներուն հետ, մեր երկիրներուն մէջ, մեր հայրենիքին մէջ: Թող Աստուած երկնքէն լսէ մեր այս հրեշտակներն ձայնը, որպէսզի խաղաղութիւնը տիրէ մեր բոլորին մէջ: Եւ ըսաւ, որ այսօր եկեղեցին ուրախ է, որովհետեւ մենք տակաւին կ'ապրինք մեր քրիստոնէութիւնը, որովհետեւ կը հաւատանք, որ առանց խաղաղութեան արքային ինչ որ կը ծրագրենք՝ ապարդիւն է: Գերյարգելի վարդապետը շնորհակալութիւն յայտնեց գեղեցիկ երեկոյին զաղափարը յղացող Օրդ. Մարօ Գայայեանին, ինչպէս նաեւ հանդիսութիւնը կազմակերպող Տիկ. Ռիթա Պոյաճեանին, զանոնք պարգեւատրելով Աստուածամօր պատկերով յուշանուէրով:

Տօնակատարութեան աւարտին ներկաները խանդավառութեամբ դիմաւորեցին Կաղանդ Պապան, որ գեղարուեստական յայտագրին մասնակից աշակերտներուն բաժնեց նուէրներ: Կատարուեցաւ նաեւ հիւրասիրութեան:

Պոլսոյ Սեջ Լոյս Տեսալ «ԱՆԻ» Գիրքը Թրքերէնով



Վէտաթ Աքչակէօզ իրաւամբ կարսի եւ մասնաւորաբար պատմական Անիի աւերակներուն մասնագէտ մըն է: Ան չորս տարի առաջ, հրատարակած է Անիի մէջ իր պրպտումներու եւ ուսումնասիրութիւններու մասին աշխատասիրութիւն մը անգլերէն լեզուով «Նիու Տիսքափըրիս Ին Անի» խորագիրով: Հիմա այդ աշխատասիրութիւնը թարգմանուած է նաեւ թրքերէնի ու հրատարակուած «Ենի Քէշիֆլէր Իլէ Անի» վերնագրին ներքեւ, շատ աւելի լայնածաւալ ու յաւելուածական նորանոր բաժիններով: Թրքերէնով այս հատորի մեկենասութիւնն ստանձնած է «Հայճար» Միութիւնը:

Այս առթիւ՝ հետաքրքրական էր իմանալ թէ հեղինակը Վէտաթ Աքչակէօզ ինչպիսի բժախնդրու-

թեամբ աշխատած եւ պրպտումներ կատարած էր այս գիրքը լոյս ընծայելու համար: Ամիսներ շարունակ տեղուցն վրայ ուսումնասիրած էր Անիի աւերակները: Ան մի առ մի լուսանկարած էր յատկանշական բոլոր մասերը եւ մէտ-ջեղ բերած այս ստորածաւալ եւ արժէքաւոր հատորը: Ինք մեծ բարեբախտութիւն կը նկատէր «Հայճարի» հետ ծանօթացումը եւ անոնց հետ միասին աշխատելը:

«Հայճար»ի ատենապետուհի Կիւլիւզար Արթուշն ալ գոված էր Աքչակէօզի աշխատասիրութիւնը: Գիրքը կը բաղկանայ 400 մեծադիր էջերէ, ամբողջովին գունաւոր: Իսկապէս հսկայ գործ մըն է, շատեր անտարակոյս, պիտի ուզեն գայն ունենալ իրենց գրադարաններուն մէջ: «Մ»

Սեւան Պչաքճը Թուրքիոյ Նախագահի Մրցանակի Դափնեկիր



Պոլսոյ «Մարմարա» օրաթերթէն կ'իմանանք թէ Անքարայի Պէշթափէ համազումարներու եւ մշակոյթի կեդրոնին մէջ, քանի մը օր առաջ, հիւրընկալուած են գեղարուեստի ու մշակոյթի ոլորտներու այն գործիչները, որոնք այս տարի, արժանացած էին նախագահական բարձր շքանշանին ու այդ պարգեւը կը ստանային անձամբ:

Մեծարման հանդիսութիւնը՝ հայ համայնքին համար տարբեր իմաստ եւ նշանակութիւն ալ կը ստանար: Արդարեւ, համայնքէն հանրայայտ դէմք մը, ստեղծարար ոսկերիչ, «Մատանիներու տիրակալ» Սեւան Պչաքճը կը պարգեւատրուէր արուեստի եւ մշակոյթի ոլորտէ ներս իր արձանագրած հռչակի, ձեռքներուն համար, դառնալով նաեւ նախագահական մրցանակի արժանացած առաջին հայը:

Այս առթիւ՝ յատուկ պատուիրակութիւն մը Անքարա մեկնեցաւ,

Սեւան Պչաքճը ընտանիքի անդամներով եւ գլխաւորութեամբ Թուրքիոյ հայոց պատարիարք՝ Ամենապատիւ Տ. Սահակ Արք. Խ, շքանշաններու տրուութեան ականատես դառնալու համար:

Շքանշանները յանձնելէ առաջ հսկայ պատասառի մը վրայ մէկ առ մէկ ներկայացուեցան տեսաերկերներ՝ պարգեւատրեալներու կեանքէն յատկանշական դրուագներ ներկայացնելով: Սեւան Պչաքճը մասին գնահատական արժեւորումներ կատարեցին հանրայայտ երկու անձեր Կիւլիւ Սապանճը եւ պատմաբան Իլպեռ Օրբայլը: Այնուհետեւ բեմ ելաւ Սեւան Պչաքճը եւ նախագահ իրողանէն ստացաւ իր շքանշանն ու յատուկ վկայականը:

Սեւան Պչաքճը վաղուց դուրս ելած է հայաշխարհի սահմաններէն ու վերածուած համաշխարհային տարողութեամբ «պրէնտ»ի (վաճառանիշ):

Արեւելեան Թեմի Առաջնորդ

Շարունակուած էջ 12-էն

Աստուած մեզի հետ է որովհետեւ կը հաւատայ մեզի, կը վստահի որ մենք կարողութիւնը ունինք փոխադարձելու մեզի հանդէպ նախ իր ցուցաբերած սիրոյն, իր Որդուց՝ Յիսուսի մարդեղութեամբ: Քրիստոսի միջոցաւ Աստուած մեր առջեւ բացաւ ճամբան մօտենալու իրեն եւ վայելելու իր գթաւատ, հայրական սէրը:

Միբեւոյն, բարի լուր մը, աւետիս մըն է այս, եւ իսկապէս մեծ աւետիս մը: Եւ ասոր համար է որ մենք, Հայ Եկեղեցուց զաւակներս, գիրար կ'ողջունենք հետեւեալ յաւերժական ողջոյնով: «Քրիստոս Մնաւ եւ Յայտնեցաւ»: Եւ կը պատասխանենք այդ ողջոյնին ըսելով. «Ձեզ եւ մեզ մեծ աւետիս»:

Այս աւետիսը, ուժ կու տայ մեզ պայքարելու ընդդէմ աշխարհի բոլոր վատ լուրերուն եւ պատահարներուն: Արդարեւ, Քրիստոսի ծննդեան աւետիսը միւսիւրեւն ու պաշտպանած է Հայ ժողովուրդի զաւակները սերունդներ շարունակ:

Բայց այժմ, Ս. Մնուղեան տօնին ընդառաջ, պարտինք պատասխանել սա հարցումին թէ՛ արդեօք մենք ի՞նչպէս պարտինք պատասխանել Աստուծոյ սիրոյն. ի՞նչ պիտի ըլլայ մեզմէ իւրաքանչիւրին պատասխանը ի տես Աստուծոյ սիրոյն:

Միբեւոյն, պատասխանը պարզ է. Աստուած չուզէր եւ պէտք ալ չունի որեւէ արտասովոր իրագործումներու մեր կողմէ: Ան կ'ակնկալէ միայն որ մենք փոխադարձենք իր սէրը, եւ բաժնենք զայն այլոց հետ:

Երբ մենք այդ կ'ընենք, արդէն իսկ առաջին քայլը առած կ'ըլլանք կեանք մը եւ ընկերութիւն մը ամուր հիմքերու վրայ դնելով, որոնք ճշմարտապէս արժանի են այն խոստումին թէ՛ «Աստուած մեզի հետ է»:

Թող այս ըլլայ մեր նպատակակէտը Ս. Մնուղեւ կանխող այս օրերուն եւ յառաջիկայ տարուայ ընթացքին: Իմ օրհնութիւնս բոլորիդ: Կ'աղօթեմ ձեր բոլորին համար յոյսի եւ խաղաղութեան այս շրջանին:

Քրիստոս Մնաւ եւ Յայտնեցաւ: Ձեզ եւ մեզ մեծ աւետիս:

Մեծ Ուրախութեան Աւետիսը

Շարունակուած էջ 12-էն

գոյն անէծքն է, որ կը բաժնէ արարածը իր Արարիչէն: Ահա այդ պատճառով է, որ հրեշտակը կը յայտարարէ հովիւներուն. «Ձեզի մեծ ուրախութեան աւետիս մը կու տամ որ բոլոր ժողովուրդին պիտի ըլլայ»:

Յիսուս Քրիստոսի հրաշափառ ծնունդը աշխարհի մեծագոյն հրաշքն է, որովհետեւ իր սուրբ Մնուղեով Աստուած ինքզինք կը պարգեւէ համայն մարդկութեան: Յիսուս մանուկին ծնունդով Աստուած կ'այցելէ մարդկութեան: Աստուած կը մարդկանայ՝ իրմէ հեռացած մարդոց հետ բնակելու եւ անոնց վերստին ծնունդ տալու համար: Ասիկա կ'ընէ, որովհետեւ Ան կը սիրէ մարդ արարածը անսահման սիրով:

Հովիւները երբ այս մեծ ուրախութեան աւետիսը լսեցին, ամանմիջապէս գործի անցան: Իրարու ըսին. «Եկէք Բեթլեհեմ երթանք եւ տեսնենք պատահածը, այն ինչ որ Տէրը մեզի յայտնեց»: Անոնք անյայտաբար Բեթլեհեմ գացին եւ փնտրելով գտան նորածին Արքան, Յիսուս Մանուկը, եւ փառաբանեցին եւ օրհնաբանեցին զԱստուած: Ուրախութեան լուրը պէտք է մղէ անհա-

տը գործնական քայլ առնելու եւ ստուգելու ուրախութիւն պատճառող եղելութիւնը փնտրելու, գտնելու գայն եւ զԱստուած օրհնաբանելու:

Աւելի քան քսան դարեր ետք, բազմամիլիոն մարդիկ աշխարհի չորս ծագերուն ամէն տարի Քրիստոսի Մնուղը կը տօնեն առանց Յիսուս Մանուկը փնտրելու եւ գտնելու: Մնուղը կը տօնեն առանց Մնեալին: Անոնք կը մոռնան թէ Ս. Մնուղի տօնակատարութեանց մէջ ամենէն կարեւոր բանը Բեթլեհեմի Մանուկը ընդունիլ որպէս Փրկիչ եւ զԱստուած փառաբանել եւ օրհնաբանել այս մեծ Պարգեւին համար:

Արդ, եթէ կ'ուզենք իսկական Մնուղ մը տօնել Աստուծոյ փառք տալու ենք իր շնորհաբեր այցելութեան համար եւ մեր սրտերը վերածենք մէկական Բեթլեհեմեան մսուրի՝ իր միածին Որդին հիւրընկալելու համար եւ փառաբանութեան գոհունակ սրտով յայտարարելու՝

Քրիստով ծնաւ եւ յայտնեցաւ.

Ձեզի, մեզի մեծ աւետիս:
Վեր. Դոկտ. Վահան Յ.
Թուրքիեան, Գործադիր Տնօրէն
Հայ Աւետարանական
Համաշխարհային Խորհուրդի

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին

Կապելո. Մեսին, Պելեն ու Մարատոնյան Նոյն շարքին են



«Միլանի», «Ռեալի», «Ռոմայի», «Եռվենտուսի», Անգլիայի եւ Ռուսաստանի հաւաքականներու նախկին գլխաւոր մարզիչ, իտալացի Ֆապիո Կապելոն պրագիլցի Փելէին, արժենթինցիներ՝ Տիեկո Մարատոնային ու Լիոնել Մեսին կը համարէ հաւասար մեծութիւններ ֆութպոլի մէջ՝ չտալով անոնցմէ որեւէ մէկուն առաւելութիւն:

«Աշխարհի առաջնութեան ախոյեանի տիտղոսը նուաճելէ առաջ ալ Մեսին ինծի համար ֆութպոլային հանճարներէն մէկն էր: Ան փելէի եւ Մարատոնայի հետ նոյն շարքին է: Անոնք խաղաղաշտին մէջ ըրած են աջակիսի բաներ, որ միւսները պատկերացնել չէին կրնար», - Կապելոյի խօսքը կը մէջբերէ Corriere della Sera-ն:

Միայն փելէն յաջողած է երեք անգամ դառնալ աշխարհի ախոյեան: Մարատոնյան ու Մեսին մէկական անգամ նուաճած են տիտղոսը:

L'Equipe. Տարուայ Խորհրդանշական Հաւաքականը

Ֆրանսական L'Equipe-ը կազմած է աւարտող տարուայ խորհրդանշական հաւաքականը՝ ընդգրկելով Եւրոպայի առաջատար 5 լիգաներու ներկայացուցիչներուն:

- Դարպասապահ. Տիբո Կուրտուա (Պելճիքա, «Ռեալ»):
- Պաշտպաններ. Կայլ Ուոքեր (Անգլիա, «Մանչեսթըր Սիթի»), Վիրջիլ վան Դէյք (Հոլանտա, «Լիվերփուլ»), Եոշի Կուարդիոլ (Խորուաթիա, «ՌԲ Լայպցիկ»), Տէօ Էրնանտես (Ֆրանսա, «Միլան»):
- Կիսապաշտպաններ. Լուկա Մորիչ (Խորուաթիա, «Ռեալ»), Քազեմիրո (Պրագիլ, «Ռեալ»)/«Մանչեսթըր Եունայթեդ»), Լիոնել Մեսի (Արժենթին, ՊՍՃ), Քեւին Դե Բրայն (Պելճիքա, «Մանչեսթըր Սիթի»):
- Յարձակողներ. Քարիմ Պենզեմա (Ֆրանսա, «Ռեալ»), Կիլիան Մպպէ (Ֆրանսա, ՊՍՃ):

Մպպիէն Դարձեալ Աշխարհի Ամենասուղ Ֆութպոլիստն Է

Աշխարհի Բաժակի լաւագոյն ուճարկուի «Ոսկէ խաղափոշիկը» ստացած 24-ամեայ ֆրանսացի յարձակող Կիլիան Մպպիէն Transfermarkt-ի վարկածով դարձեալ աշխարհի ամենասուղ ֆութպոլիստն է՝ 180 միլիոն եւրո:

TOP 11 MOST VALUABLE FOOTBALLERS		
PLAYER	VALUE	
1	Kylian Mbappe	£144m
2	Erling Haaland	£135m
3	Vinicius Junior	£108m
4	Pedri	£81m
4=	Jude Bellingham	£81m
4=	Phil Foden	£81m
4=	Harry Kane	£81m
9=	Dusan Vlahovic	£77m
9=	Bruno Fernandes	£77m
9=	Kevin De Bruyne	£77m

Աշխարհի Բաժակ առաջ Մպպիէի փոխադրումը կը գնահատուէր 160 միլիոն եւրո: Ան երկրորդ տեղն էր Անգլիոյ ախոյեան «Մանչեսթըր Սիթիի» 22-ամեայ յարձակող Էրլինգ Հոլանտէն յետոյ (170 միլիոն եւրո): Նորուելիացի յարձակողը առաջատարն էր Նոյեմբերի 3-էն Դեկտեմբերի 23-ը:

Երրորդ տեղը Մատրիտի «Ռեալի» պրագիլցի յարձակող Վինիսիուս Ժոնիորն է՝ 120 միլիոն եւրո:

Ձիտանը՝ Պրագիլի Հաւաքականի Գլխաւոր Մարզիչի Հիմնական Թեկնածու

Մատրիտի «Ռեալի» նախկին գլխաւոր մարզիչ Ձիտանը Ձիտանը Պրագիլի հաւաքականի գլխաւոր մարզիչի հիմնական թեկնածուն է, կը հաղորդէ ֆրանսական L'Equipe-ը: Պաշտօնը թափուր է պրագիլցի Տիտէի հրաժարականէն յետոյ:

Պրագիլի ֆութպոլի կոնֆետերացիայի ղեկավարութիւնը կը ցանկայ ազգային խումբի ղեկին տեսնել Ձիտանին, որու հետ կը փորձէ բանակցել: Թեկնածուներու մէջ են նաեւ արժենթինցի Մաուրիսիօ Պոզետինոն, փորթուկալացի Ժոզէ Մոուրինիոն, գերմանացի Թոմաս Տուխելը եւ սպանացի Ռաֆայէլ Դենիտեսն ու Լուիս Էնրիկէն:

50-ամեայ Ձիտանը առանց մարզական աշխատանքի է 2021-ին «Ռեալէն» հեռանալէն յետոյ: Կը սպասուի որ աշխարհի առաջնութենէն յետոյ ան Ֆրանսայի հաւաքականի գլխաւոր մարզիչի պաշտօնը ստանձնէ փոխարինելով Տիտիէ Տեշամին, որու պայմանագիրը նախատեսուած է մինչեւ Դեկտեմբերի 31-ը:

Հայաստանը 2023 Թուականի Աշուն Կը Հիւրընկալէ Սամպոյի Մեծահասակներու Աշխարհի Առաջնութիւնը

Սամպոյի մեծահասակներու աշխարհի 2023 թուականի առաջնութիւնը Նոյեմբերի 10-12-ը կը կատարուի Երեւանի մէջ: Այս մասին յայտնած է Սամպոյի միջազգային ֆետերացիան՝ FIAS-ը:



«FIAS-ի գործադիր կոմիտէի անդամները որոշած են հաստատել Հայաստանի թեկնածութիւնը՝ նկատի առնելով այս տարուայ Հոկտեմբերին սամպոյի դեռահասակներու, պատանիներու եւ երիտասարդներու աշխարհի առաջնութեան անցկացման յաջող փորձը Երեւանի մէջ», - կ'ըսուի FIAS-ի տարածած հաղորդագրութեան մէջ:

2023 թուականին Երեւանի մէջ կը կատարուի նաեւ ծանրամարտի Եւրոպայի մեծահասակներու առաջնութիւնը:

Հայաստանի հաւաքականները յաջող ելոյթներ ունեցած են աշխարհի առաջնութեան՝ նուաճելով 20 մետալ՝ 1 ոսկէ, 2 արծաթէ եւ 17 պրոնզէ:

ՖԻՖԱ-ի Դասակարգման Աղիւսակին Վրայ Հայաստանի Հաւաքականը 95-րդն Է

Ֆութպոլի միջազգային ֆետերացիան՝ ՖԻՖԱ-ն, հրապարակած է նոր դասակարգման աղիւսակը:

Վարկանիշային նոր աղիւսակին վրայ Հայաստանի ընտրանին նահանջած է եւ կը գտնուի 95-րդ տեղը:

Դասակարգման նոր աղիւսակի առաջատարը կրկին Պրագիլին է: Աշխարհի նորընծայ ախոյեան Արժենթին բարելաւած է դիրքը եւ այժմ 2-րդ հորիզոնականի վրայ է:

Լաւագոյն 10-ին մէջ են Ֆրանսան, Պելճիքան, Անգլիոյ, Հոլանտան, Խորուաթիան, Իտալիան, Փորթուկալը եւ Սպանիան:

Սալահը «Մանչեսթըր Սիթիին» Կուարդիոլայի Օրով 10 Կոլ Նշանակած Առաջին Ֆութպոլիստն Է

«Լիվերփուլի» եգիպտացի յարձակող Մոհամետ Սալահը դարձաւ «Մանչեսթըր Սիթիին» գաթալոնացի գլխաւոր մարզիչ Սոսեպ Կուարդիոլայի օրով 10 կոլ նշանակած առաջին ֆութպոլիստը:



Սալահ այդ ցուցանիշին հասած է «Մանչեսթըր Սիթիի» դէմ կատարած 16 խաղերու ընթացքին:

Անգլիական լիգայի գաւաթի խաղարկութեան 1/8 եզրափակիչին «Լիվերփուլը» Կուարդիոլայի գլխաւորած խումբին պարտուեցաւ 2:3 արդիւնքով: Սալահը դարձաւ 1 կոլի հեղինակ:

Քառորդ եզրափակիչին «Մանչեսթըր Սիթիի» մրցակիցը կ'լլայ «Սաութհեմփթընը»:

Ժոզէ Մուրինիոն Զէ Փափաքած Գլխաւորել Փորթուկալի Հաւաքականը

Իտալական «Ռոմայի» գլխաւոր մարզիչ Ժոզէ Մուրինիոն մերժած է Փորթուկալի ֆութպոլի ֆետերացիայի առաջարկը՝ գլխաւորելու այդ երկրի ազգային հաւաքականը:

Ինչպէս կը նշեն լրատուամիջոցները, 59-ամեայ մարզիչը իր այդ որոշումը բացատրած է անով, որ կը ցանկայ աշխատիլ ակումբային մակարդակով: Փորթուկալի մասնագէտի պայմանագիրը Հոռոմի «Ռոմայի» հետ կ'աւարտի 2024 թուականի ամռան:

Ֆութպոլի Աշխարհի Բաժակէն յետոյ Փորթուկալի ֆութպոլի ֆետերացիան պաշտօնանկ ըրած էր հաւաքականի երկարատեւ գլխաւոր մարզիչ Ֆերնանտու Սանթուշին, որ խումբի հետ դարձած էր Եւրոպայի ախոյեան եւ Ազգերու լիգայի յաղթող:

Չաւին Որոշած Է «Պարսելոնայի» Անձեռնմխելի Խաղացողներուն Անունները

Սպանական «Պարսելոնայի» գլխաւոր մարզիչ Չաւին որոշած է այն խաղացողները, որոնց ակումբը ոչ մէկ պայմանով չի վաճառեր, նոյնիսկ եթէ վճարման խնդիրներ յառաջ գան:

Սպանացի մարզիչը չի ցանկանար բաժնուիլ պաշտպաններ Ռոնալտ Արաուխոյէն, Ժիլ Գոնզալէսէն, կիսապաշտպաններ Փետրէն, Կաւէն, յարձակողներ Ռոբերտ Լեւանդովսկէն եւ Անսու Ֆատէն: Բացի այդ, «կապտանունագոյնները» մտադիր չեն վաճառել Ֆրենքի տէ Եոնգին, որուն Չաւին կը տեսնէ որպէս Սերխիօ Պուսկետի փոխարինող:

«Պարսելոնան» Սպանիոյ առաջնութեան 14 հանգրուանէն յետոյ կը գրաւէ առաջին տեղը: